

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆՏԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻՈՅ ԲԱՐԵԿԱԳՈՒՍԸ

Գ

Թիւրքիոյ բարեկարգութեան խնդրին պատմութիւնը երկու յօդուածի մէջ ամփոփեցինք: Տեսնաք թէ 1800էն 1899 սուլթանները մերթ ինքնաբերաբար ուզեցին վերա- նորոգել օսմանեան կայսրութիւնը, մերթ Եւրոպայի բարեացակամ խորհրդատուութիւնը շաղկուեցաւ իրենց, ու մերթ ալ սպառնալիքներու տակ ճնշուեցան. եւ սակայն դարու մը փորձառութիւնը վերջնապէս հաստատեց թիւրքիոյ ո՛ր եւ է մէկ նահանգին բարեկարգութեան անհնա- բաւութիւնը առանց եւրոպական միջամտութեան: Աս երեւոյթին մէկ քանի պատճառները ներկայացնենք:

* * *

Սուլթան Մահմուտի օրով երբ թանգիւմաթ բառը ար- տասանուեցաւ, միեւնոյն ատեն իւլէման նախ տրտունջ- ներ մրմուռաց ու ետքէն ալ բողոքի ձայնը ուժգնապէս հնչե- ցուց: Օսմանի կայսրութիւնը աստուածպետական հիմ- նարկութիւն մըն է որ իրեն օրինադիրք մը ունի եւ պետ մը: Օրինադիրքը՝ Ղուրանն է, խղճմտանքներու վարդա- պետարանը. պետը՝ սուլթանը, Մէհմէտին ու խալի- ֆաներուն յաջորդը, որուն կոչումը անհաւաստներուն դէմ անգույ անդադար պատերազմն է: Բարեկարգութիւնը կը ձգտի պետութեան աշխարհականացումին, ուստի եւ անոր կրօնական հիմը խախտելու պիտի ծառայէ. հետեւաբար Ղուրանը ոսմակոխ պիտի ըլլայ եւ Ալլահին բարեկութիւնը պիտի թափի Օսմանի կայսրութեան զլխուն: Իւլէման իրեն զօրավիզ ունէր ամբողջ իսլամական աշխարհը. իր ընդդիմադրութիւնը ահարկու էր, եւ ո՛ր եւ է տարրական բարենորոգում որ պետութեան կրօնական կարգուկանոնները խախտելու կը նկրտէր արդէն ոչնչա- ցումի գատապարտուած էր: Այսպէս ահա սուլթան Մահմուտէն մինչեւ սուլթան Ազիզ թանգիւմաթ, Հաթիթը- Հիւմայուն ամենքն ալ բառ ու սառ մնացին:

Քիչ շատ հեռատես սուլթանները ու իրենց համախոհ նախարարները անկարող էին իսլամութեան շահերը չվր- տանդելով եւրոպականացեալ վարչութիւն մը հիմնելու պայմանները ստեղծել: Սուլթան Ազիզի դահակալութեան առաջին տարիները Փուատ եւ Ալի փաշաները ջանացին համերաշխել իսլամական ու եւրոպական վարչային դը- րութիւնները: Անոնց մտածութիւններուն մասին առանց երկար խօսելու պարզ օրինակով մը ցոյց տանք թէ նոյն իսկ այդ լուսաւորեալ համարուած նախարարները մինչեւ ո՛ր կրնային յառաջանալ քրիստոնեաները երկրին վարչութեան մասնակից ընելու զիջումին մէջ:

1864ին հրատարակուեցաւ Վիլայէթներու օրէնքը որ իսլամներու եւ քրիստոնեաներու հաւասարութեան սկզբունքին գործադրութիւնն է: Վիլայէթը իր զուլեք ու նի ընդհանուր կառավարիչ մը որ վալի կը կոչուի: Վիլայէթը բաժնուած է սանճազներու, քաղանքերու, նահիէ- ներու. իւրաքանչիւր շրջանակի մէջ իտարէ մէճլիսի մը կայ եւ պատարան մը որոնց անդամները մեծ մասամբ ընտ- րողական գործողութեամբ նշանակուած են: Բայց ընտ- րողական մարմինը շատ սահմանափակ է, գրեթէ միայն պաշտօնատարներէ ու սչ-իսլամներու կրօնական պետե- լին կը բաղկանայ, եւ կ'առաջարկէ միայն ընտրելիներ ու ըրոնց մասին վերջին խօսքը վալիին կը մնայ: Ինքն է, առ իսլամ պաշտօնեան, գրեթէ անպատասխանատու, որ կը նշանակէ իտարէ Մէճլիսին եւ պատարանին անդամները, անոնք որ իր գործերուն վրայ տեսակ մը հսկողութիւն պիտի ընեն:

Ընտրողական սկզբունքը ընդունուած եւ հանդիսաւորապէս ալ օրէնքի մէջ անցած է, բայց զերիշխանու- թիւնը միշտ իսլամ տարրին պահելու եղանակաւ կը գործադրուի: Օրինակ, վիլայէթներու օրէնքը հրատարակուած ատեն Էտիրէի սանճազը 4,000 իսլամ եւ 60,000 քրիստոնեայ բնակիչ ունէր, բայց իտարէ Մէճլիսին մէջ 11 իսլամ եւ 3 քրիստոնեայ անդամ կը ներկայանային: Եւ սակայն այսքան զիջողութիւնը անգամ մեծ յանդգնու- թիւն սեպուեցաւ նոյն իսկ Փուատ եւ Ալի փաշաներուն օրով, երբ թիւրքիոյ պաշտպաններն ալ Փրանսոս ու Անգլիա էին:

Եւրոպականացեալ բարեկարգութեան ու քրիստոնէին և իսլամին հաւասարութեան պաղափարները սրբան աւելի առ-

րածուեցան, այնքան աւելի զօրացան իսլամական մուսուլմանութեան զգացումները, որոնց ծնունդը եղաւ Երիտասարդ Թիւրքիան, «Ժէօն-Թիւրք» կոչուածը: Այս կուսակցութիւնը իսլամութեան վերածնունդին մէջ ուզեց փնտռել օսմանեան կայսրութեան վերածնունդը. իրեն համար՝ կենդանութեան առատահոս աղբիւրը Ղուրանն էր միայն, ուստի և անոր հեղինակութիւնը զօրացնելու հետամտեցաւ: Իր ծրագիրն էր՝ փատիշահին շուրջ բոլորել երկու հարիւր միլիոն իսլամները, Ղուրանին առաջնորդութեամբը ահեղ բանակ մը կազմել, ու անցեալին փառաւոր ականգութիւնները վերսկսիլ: Ժէօն-Թիւրքիան կը ներկայացնէր համաիսլամութիւնը սրուն պետը Միտհատ փաշան էր, սպայակոյտը՝ իւլէման, զինուորը՝ սօֆթան, ու տարածումի հըզօր միջոցը՝ մամուլը: Մահիկը խաչին դէմ հանել, բերստոնէութեան հետ մարտնչիլ, — համիսլամական քաղաքացականութիւնը եղաւ: Սուլթան Ազիզ՝ տկար միտք կարող չէր ո՛չ այս ծրագիրը ըմբռնել ո՛չ ալ անոր գործադրութեան միջոցները ապահովել. ուստի գահընկէջ ըրին անիկա և սպաննեցին: Միտհատի Սահմանադրութիւնը նպատակ ունէր արտաքին երեւոյթները փրկելով արդիւիւ եւրոպական միջամտութիւնը Թիւրքիոյ դործերուն մէջ: Երեւակոյտին ու երեսփոխանական ժողովին անդամները գրեթէ կառավարութեան կողմէ կը նշանակուէին, և իսլամութիւնը կը ներկայացնէին, չնչին թուով բրիտանացիներու մասնակցութեամբ: Աս սահմանադրութիւնն ալ համիսլամական գաղափարին դործիք մըն էր: Սուլթան Համիա իր վրայ առաւ համիսլամութեան գործը, առանց սակայն ո՛ր և է Միտհատի մը ընկերակցութեանը, կամ խալիֆային իշխանութեան մէջ սահմանադրական ո՛ր և է ստնձգութեան: Միայն իսլամութիւնը, և անոր գլուխը միահեծան խալիֆ-սուլթանը հրամանատու: Հին ու նոր Թիւրքիան միացան սուլթան Համիտի անձին մէջ:

Այսպէս ահա շարունակ մէկ դար Թիւրքիոյ բարեկարգութեան գաղափարին դէմը կը կանգնի իսլամական կրօնը, որուն համար եւրոպական ըմբռնումով բարենորոգումը, հաւասարութեան և ազատութեան սկզբունքներուն վրայ հիմնուած, որիչ բան չէ բայց եթէ մահմէտական կրօնը և անոր հետեւող ժողովուրդը արագափոյթ ոչնչացնող քաղաքականութիւն մը:



Բուրբուլին կը սխալին իսլամները իրենց այս նախազգացումին մէջ:

Օսմանցիները, առանց Եւրոպայէն ո՛ր և է կախում ունենալու, չորս դար սանձարձակ տիրեցին Ասիա ու Եւրոպա իրենց աշխարհակալած երկիրներուն վրայ: Աս երկարատե ժամանակամիջոցին անկարող գտնուեցան յալթահարուած ժողովուրդները իրենց հետ ի մի ձուլելով քաղաքական և ընկերական կապերով զօրուած ազգութիւն մը կազմելու: Աշխահակալող Թիւրք իսլամը միշտ իրմէն հեռու խոնարհ պահեց «բայա»ն: Իսլամները ուժի

մէջ փնտռեցին գերիշխանութեան ապահովութիւնը: Շատ տեղուանք սակայն Թիւրք տարրը փորձառականութիւն կազմելով՝ միայն բռնապետութեամբն էր որ բրիտաններին վրայ կ'իշխէր: Ան օրը որ Հաւասարութիւնը իրականապէս հաստատուէր և Արդարութիւնը տիրապետէր, ան օրը ուժը բրիտաններին կողմը անցնելով ա՛լ իսլամը անոր գերիշխանութեանը պիտի ենթարկուէր: Թիւրքերը կը զգային, ինչպէս որ փորձն ալ հաստատեց, թէ բայաներու արուած և և է առանձնաշնորհում՝ քաջալերանք մը պիտի ըլլայ նորանոր պահանջումներու որոնք վերջ ի վերջոյ այս կամ այն նահանգին օսմանեան կայսրութեանն անջատուժը ըստիպողական հարկ պիտի դարձնեն:

Իսլամները դարէ մը ի վեր է շուարած կը գործեն: Հաւասարութեան ու Արդարութեան սկզբունքներուն անկեղծ գործադրութեամբը իրենք բարոյապէս ու նիւթապէս պիտի ստորագասուին բրիտաններուն: Հին մուսուլմանական քաղաքականութիւնն ալ յաջողութեամբ գործադրելու անկարողութեան մէջ կը գտնուէին: Իրենց կը պակսէր ահեղ զօրութիւնը որուն կոթնած երբեմն կ'ահաբեկէին Եւրոպան ու կը յաջողէին բրիտանացի հպատակները ստրկական վիճակի մէջ պահելով աշխատցնել և կեղեցիկ անոնք: Խելակորոյս իսլամութիւնը նուազ վտանգաւոր համարեց մուսուլմանական քաղաքականութեան անընդհատ շարունակութիւնը. ուստի անխնայ զարկաւ, կատորեց, ջարդեց, էրեց մրկեց բրիտանները, մինչև որ կայսրութիւնը հիմէն բանդեց: Միայն հայկական կոտորածներուն առթիւն է որ Թիւրքական իշխանութիւնը տակաւին անպատիժ կը մնայ: Բայց հաշուէյարդարութեան ժամը պիտի հնչէ: Եւրոպայի բոլոր խորհուրդները՝ քաղաքազէտ, պատմաբան, հրապարակագիր, իմաստասէր՝ միաձայն են յայտարարելու թէ հայկական կոտորածները ջնջեցին Թիւրքիոյ փրկութեան համար ո՛ր և է յոյս՝:



Իսլամութեան մուսուլմանութիւնը եթէ նկատողութեան առնել չուզենք իսկ, Թիւրքը իբր ցեղ՝ միայն բանգումի ու աւերումի համար ստեղծուած է: Փորձառութեան հաստատած ճշմարտութիւնն է թէ «Թիւրքին անցած տեղէն ա՛լ խոտ չի բուսնիր»: Մեր մէջ ալ Հայաստան ընդունուած է թէ «Թիւրքը արմատէն կը կտրէ իր վրայ շուք տարածող ծառը»: Ու արդարեւ աշխարհիս որ կողմը որ Թիւրք ցեղը երեւցած է հոն միայն աւերակ աւերակի վրայ ձգելով հեռացեր է: Չարագործութեան համար միայն ծընած աս ժողովուրդը պատերազմի ու աւարատութեան մէջ ճարպիկ գտնուած է, իսկ քաղաքական, սնտեսական, վարչական կազմակերպութեան անընդունակ: Իրենց անմիջական պէտքերը, իրենց հաճոյքները զոհացնելու համար հատուցին, սպանեցին հողին ու մարդուն կենսականութիւնը: Բնական էր ուրեմն որ քաղաքակրթութեան տարածումին առջև աներեւութանալու գատապարտուէին: Թիւրքական բոլոր կայսրութիւնները սրունք նոր ժամանա-

կին սկիզբները հիմնուեցան, իրենց զօրութեան զազաթ-
նակէտը հասան 16րդ և 17րդ դարերուն, ու անկէ ետքը
սկսան սկաւանակ եւ անհետիլ: Օսմանցիները տիրեցին
Աղբիականէն Տիրիս, Սեւ Մովսէս Սահրա. Մեծ-Մոն-
կոնները սրոնք հակառակ իրենց անունին թիւրք են, ի-
րանի սարահարթէն հասեցան դէպի Հնդկաստանի մէկ
մասը. բայց բան մը չթողուցին. ու ինչ որ կը մնայ Օս-
մանցիներէն ան ալ օրէ օր կը կորսուի:

Թիւրքերուն երեւումը ո՛ր եւ է օգուտ չունեցաւ մարդ-
կութեան, վնասէ գատ: Քաղաքակրթութեան զարգացու-
մի պատմութեան մէջ սեւ արատ մը կը մնայ իրենց տա-
րեզրութիւնը: Իրենց մեծութիւնն ալ վաղանցուկ եղաւ.
անկումնին ակներեւ էր 18րդ դարուն սկիզբէն. Եւրոպայի
պետութիւնները իրարու մօտեցան թիւրքին կապուան ու
կողոպուտը հետզհետէ մէջերնին բաժնեկու: Երկու դար է
առ բաժանուը կը կատարուի ու կը շարունակուի:

* *

Առաջնորդուելով մեր զիտցածներէն ու Եւրոպայի
սլաւոնաբաններու եւ քաղաքագէտներու բերանացի յորդոր-
ներէն և հին ու նոր հրատարակութիւններէն, «Նոր Կիան-
ք»ի եւ «Մարտ»ի մէջ շարք մը յօդուածներով Հայ ժողո-
ւըրդին ուշադրութեանը ներկայացուցինք, եւ պիտի շա-
րունակենք ներկայացնել, Արեւելեան խնդրին վերաբերեալ
պատմական եղելութիւններ զորոնք մօռնալ կամ անգիտա-
նալ աններկի յանցանք է անանկ ժամանակ մը երբ Հայ-
կական խնդրը զոյութիւն ունի ու պիտի կարգադրուի:

Այդ կարգադրութեան համար որոշ ժամանակ մը չենք
կրնար մատնանիշ ընել. բայց Արեւելեան խնդրին պատ-
մութիւնը մեզի համար յոյսերով լեցուն դասադիրք մըն է
որմէն շատ բան կրնանք սորվիլ: Առաջադրեալ նպատա-
կի մը ապահովարար հասնելու համար առաջին պայմանն
է երկու օրը մէկ մը նպատակ չփոխել: Առանց եւրոպական
վարչութեան անհնարին է թիւրքիս մէջ տարրական ո՛ր
եւ է բարեկարգութեան ներմուծում: Պերլինի վեհաժողո-
ւին ի վեր այս ճշմարտութիւնը ասէն Հայու մտքին մէջ
գետեղուած է: Ազգին բոլոր ջանքը եղած է այդ վարչու-
թիւնը Հայաստան հաստատել: Յետ այսքան զոհողու-
թիւններու որոնք այդ ճշմարտութիւնը գործնականապէս
հաստատեցին, վերջին պահուն փոփոխամտութեան ոճիրը
չգործենք:

ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ՊՍԱԿԸ

Երբ քահանան «Երթ առ Աստուած»ը մրթմթաց հայ
«Մեծ Ծերունի»ին վրայ, ու անոր միակ շառակիղը, Պօ-
ղոս փաշան, շրթնային օտարոտի ցաւակցութիւնները ու

ձեռնոցակիր ձեռքերու սեղմումները ընդունելէ վերջ, իր
սուզը խուցի մը երկիւղած միայնութեանը մէջ մեկուտա-
ցուց, հոն, իր վշտահար սիրտը սփոփարար լողանք մը ը-
րաւ սուղի հայկական ցոյցերուն վերյուշութեան մէջ: Սը-
ղաւուն էր որ իր սիրելւոյն հողակոյտէն երբ ընտանի
յարկը դատնայ՝ զեղումով կը զրկէ իրենները, իր ազգա-
կանը, որ ան միայն, իր հետը, սրտին արցունքը կուլայ:
Այդ ազգականը, սեւ օրերու միակ սրտցաւ վշտակիցը
փաշային համար՝ Հայ ազգը եղաւ իր մայրական կուրծ-
քը լայն բացած անոր:

Եւփաշան թերեւ այդ օրը սիրեց իր ազգը ինչպէս եր-
բք չէր սիրած գայն: Ուրախակցութիւններէ աւելի՛ վըշ-
տակցութիւնները կ'ամրապնդեն սիրոյ կապերը: «Հայոց
ցաւակցութիւնները ամէնէն աւելի դպան սրտիս» ըսաւ
բանիցս սգաւոր զաւակը զինք շրջապատող ազգակիցնե-
րուն, յուզմունքէ խախտած շեշտով մը:

Փաշային սիրտը զինքը չէր խաբած. իր մեծանուն
հօր յիշատակին Հայերուա տարած ծաղկներուն վրայ
աչքերէ ինկած ցօղեր կային: Արցունք ցաւակցութիւն մե-
րինը: Ու Երասխին մէջ կոկորդիլոս չ'ապրիր:

* *

Սեւ օրերը երազախոյս բայց յորդարտը լայն մը կը
մայթքեն կեանքի իմաստին վրայ:

Դագազներ կան որ իմաստասիրութեան գտներ ունին
իրենց մէջ. ու հանդէսներ, ուր ոգեւորութիւն է ամէն բան,
որոնցմէ մեր սիրտը յաճախ յանկարծածին առաջադրու-
թեամբ մը, նոր ուխտով մը, տեսականով մը գուրս կ'եկէ:
Հայ պաշտօնակալը, զոր օրինակ, որ Նուպարի մը յու-
դարկահանդէսին պաշտօնական սանուութիւնը, բոնի լուիւ-
թիւնը դիտեց, ու անոր հետ ազգային սուզին գուցէ միա-
միտ բայց սրտաբուղիս արտայայտութիւնը նաեւ, անկա-
րելի է որ օտարին երախտագիտութեան մասին յանկարծ
խոշոր տարակոյսով մը չցնցուի, չվրդովի, ու հաշուով
կտրուած մօրուքին մէջ ամփոփուելով՝ պահ մը չսիրէ եւ
բազել իրեններուն վրայ:

Այդ տարակոյսը, անփարատ, լլիսդ ու ջլատիչ, ես
իմ ներքին տեսողութեամբս աւելի յստակ կարգացի բան
սզազգած ձօները թափօրին պսակներուն, եւ դաբաղին
վրայ աւելի բարձրօրէն ծածանած տեսայ բան բազմերանդ
լրօշակները, զոր անտարբեր ձեռք մը պարզեր ցցեր էր
ամէն կողմ:

Այս դագաղին իմաստասիրութիւնը, յուսահատիչ ու
անսոգք իր մերկամարմին բրտութեանը մէջ, սա է թէ՛
հայ պաշտօնատարը երկրի մը մէջ որ իրը չէ, եթէ նոյն
խօսի իր արինը քսած ըլլայ իբր իւր կառավարական սայ-
լին անիւներուն, եթէ իր կեանքը փչած ըլլայ պետական
նաւուն առագաստին մէջ, իր «վրան լացող»ը, ծախիչ
իզձը հէզ Դուրեանին, իր մեծ ընտանիքը, իր ազգը պիտի
ըլլայ նորէն:

Եզիպտական կառավարութիւնը, հայ վսեմաշուքներ,

« իր ապերախտութեամբ աշխարհքը զարմացուց ». ասու-
թիւնը ծանօթ է ձեզի. եւ դուք կառավարութիւններ կը
ձանձնաք որ եղիպտականը չեն արժեր, չէ :

Բայց սա փոփոխուն նկարագրութիւնները, իրաւ,
մեծ Հայուն թաղման հանդէսին վրայ, զոր հայկական
հայրենասիրութիւնը սրտաթունդ կարգաց, ու ստուերա-
շող լուսանկարները նաեւ զոր յափշտակութեամբ զիտեց,
— այդ ակնապարար պատկերներուն մէջ որոնց վրայ Տի-
կին Գրականութիւնը իր շարքի տուփը կոտրեր է, և հա-
րաւի արեւը իր լուսափայլ շառայները հոսեր, բնաւ պի-
տի չզտնէք իշխանական ցաւակցութեան վեհունակ մէկ
շարժուձեւը, խտիվական յուզեալ խոնարհութեան մը
շարժումը նախարարապետին դազադին առջեւ, ու մթնո-
լորարը մանաւանդ ուր վշտի շեշտը, արտածութեան խազը
թրթոյ, ուր ամբոխին կսկիծը, ազգային սուզը սարոտի :

Շքեղ, հսկայ պսակներ, պատրիշ արուեստական
ծաղկներուն պէս որոնցմէ հիւսուեր են. ցաւակցական
անդու հեռադիրներ, որոնց բանաձեւին հոգէտո միօրի-
նակութիւնը հեռադրի թղթերուն համաչափ կտրուածքին
պիտի բազդատէի. ազգի ազգի դրօշակներ, բայց ոչ մէկ
ծայր մը թաշկինակի որ օտարին աչքովը թրջի. ու թա-
փորին երկայնքը, դազադը բարեւող սա զինուորներն ալ,
իրենց միամիտ պուխները հրացաննուն վրայ հակած, այս
հանդիսութեան հազիւ աւելի բան կը հասկնան քան մե-
ռելակառքին ութ խեղձ ձիերը, իրենց սուզի անհեթեթ
տարազին տակ արմնցած, ապշած :

Բայց մենք զիտենք թէ արքունական կարգուձեւը,
կիճկուած, թարմիկ ածիլուած ու իր ուղեկիցութիւն մէջ
զանգուած անպարտաւ կարգուձեւը որ պաշտօնական
հանդէսները կը կազմակերպէ՝ ամէն խորհուրդ իր ձեռքի
կանոնադրութեան կը հարցնէ, ոչինչ սրտի :

Ու մեղամաղձոտ, կը յիշես սա Վիլհելմ ինքնակալը
որ, վեհանձնութեան խեղկատակ մը թէեւ, Ֆրիտրիստուհ
սուրաց « երկաթեայ նախարարապետ » ին իր կայսերական
վերջին մեծարանքը ընծայելու, զոր Կանոնադիրքը սակայն
չէր տրամադրած :

* * *

Բարիզի ապարանքէն ուր այս մեծանձն հողին բաժ-
նուեցաւ իր մարմնեղէն պատեանէն՝ մինչեւ սա բարի ար-
մաւենիին շուքին տակ պեղուած ափրիկեան խորշը ուր իր
երկրաւոր մնացորդը ամփոփուեցաւ, Հայութեան սիրտը
իր դազադին ընկերացաւ իբրեւ խնկաման մը, որուն մէջ
ցաւը օրհնութեան պարոյրներով կը ծխար :

Վասն զի այս հայ փաշան իր մատները զիւանագի-
տական ճատրակին վրայ դրած ատեն, իր լսելափողը ան-
զին, մեզի հակեր էր :

Մինչ հայ պաշտօնատարը, իր բարձրացման համե-
մատութեամբ, կեղծ կարճատեսի կոպերու քթիթները կ'ա-
ւելցնէ՝ իր ազգը իբրեւ հին գէշ ծանօթ մը բարեւել չըս-
տիպուելու համար, Նուպար փաշան փառքի բրգային բար-

ձունքէն արցունքէ միայն պղտորած աչքերով դիտեց հե-
ռուն, մեր Սեւ Հողերը :

Հայնութեան վերին գօտիներու վրայ, աստիճանով
աւելի խոնարհ իրեն ազգակից պաշտօնակիցներ կը ձանջ-
նամ, որոնք Ես անունով կուռք մը կը պաշտէին, որոնց
սիրտը չյիշեց բնաւ ազգը որ ծնաւ զիրենք, և երբ օր մը
օտարը իր անվրիպելի ապաշնորհ կիցը տուաւ անոնց,
— բարերար կից զի ազգին վրէժը կը լուծէ ան, — այն
ատեն միայն իրենց սիրտը հայերէն լացաւ :

Բայց ասոնց թթուած դէմքը երբ օտարէն մեզի դառ-
նայ, իրենց ճակատը, այն ատեն, Պատկանեանին թուրք
կ'ողջունէ :

Նուպար փաշան որ կերպով մը խտիվներուն Ուօրիքը
եղաւ, որ իր աթոռը ցոյց տալով, ինքն ալ մեծ մարա-
ջախտի մը շէն կրնար ըսել « Չինկայ անկից, ես ինքս
ինչայ » չէր կրնար ըլլալ այն վիրաւոր գաւազը որ ձեռքը
կուրծքին խոցին վրայ սեղմած՝ մօրկանը կը փարի :

Մեր մեծ հայրենակցին մէջ անեղծ պահուած հայ-
րենասիրութեան պատրոյզը բոցափայլած էր ամէն անգամ
որ մեր հայրենի տանիքը վառող կրակէն կայծ մը ինկած
էր անոր վրայ : Ու այդ պատրոյզը հիննալով մանաւանդ
զիրաւիտ դարձած էր. օտարութեան մէջ ապրուած կեան-
քի մը երեկոյին է որ արեան ձայնը, ցեղին բնազը աւե-
լի բարձր կը խօսի :

Եւ եթէ այս Հայը կրցաւ սեւամորթը սիրել՝ անոր
համար էր նորէն որ իրենները սիրել զիտցեր էր :

Մեծ խօսքերուն պէս մեծ արարքներն ալ սըտէ կը
բղխին. Սէրն է հզօր արդանդը արդիւնափառ գործերուն.
ու սէրը մերձաւորագոյնէն կը սկսի : Պաշտօնատարը որ
չսիրեց իր ազգը, մարդկութեան էն մօտիկ մասնիկը իրեն,
օտարին համար ալ պիտի չունենայ բնաւ այն վառ մեծ
շունչը որ կեանք կուտայ հոյակապ անմեռ գործերուն :
Բարձրութեան զէնիթին իսկ վրայ՝ յաջողութեան ածպա-
րար մըն է ինք, ծաղրանկար մը մեծ դէմքերու. ազուր
փայլուն գործիքն է ան, որ երբ օր մը զինք գործածող
ձեռքերուն մէջ կը խորտակուի՝ հին, մանգոտած երկա-
թեղէններու խառնակոյտին մէջ կը նետեն :

Նուպար փաշան մինչ իր միաքը Եզիպտացոյն ճակա-
տագրին լծած էր՝ իր սիրտը Հայուն ցաւը արձագանգեց :
Եւ ասոր համար ճշգիւ, իր մահը ազգային սուգ հոչակեց
Հայութեան խիղճը որ, իբրեւ հանրային, հաւաքական գի-
տակցութիւն, վեհապետներուն անհունապէս կը գերա-
կշռէ :

Գլխիկոր ու պատկառոտ հետեւեցանք իր դազադին,
վշտաբեկ այս սուգով բայց խոր՛խտ նաեւ. զի այս հայկա-
կան փառքը, այն պահուն ուր ա'լ դէպի « ստուերներու տի-
րապետութիւնը » կը յառաջանար, ակնախտիղ հուսկ ճա-
ձանչներ կը ցայտէր վարձեալ Հայ անունին վրայ : Մերն էր
այս սուգը, սղաւորը մենք, օտարը սղակիր էր միայն. սու-
զին ցաւը ունէինք մենք, օտարը սուզին ձեռնոցը :

Եւ իր հողակոյտին վրայ, Հայերու ու օտարներուն ալ բերած ծաղկներուն լեռնակոյտին մէջ, արծաթեայ ու թաւառեայ պատկերներուն, ու անոնց սակեառ ձօներով զրուագուած մետաքսայեռ ժապուէններուն մէջտեղ, համետ, անշուք, պզտիկ պսակ մը, որ չեմ գիտեր ինչպէս մտորեր է հոգ, կը կառչի ահա ակնարկիս որ ա՛լ պիտի չթողու զանի:

Պարզուկ, աղքատիկ, ինզճուկ պտակ մըն է սա զոր ծաղկավաճառը չի ծախեր. շերանոցի ձմրան տունկը չէ. սրտի թաղարին մէջ ծլեր է. վայրի տերեւներէ հիւսեր են զայն, ու անխառնուրդ ինչպէս ամէն վայրի բաները. — Հայաստանի Հայուն պտակն է ասիկա, Հայրենիքին պըսակը: Արարատէն քաղեր են արդեօք. — զայն կրողները Արարատի զակերներ են, մեր կտրիճները: Ապրի՛ք, տըզաք:

Ու հիմա, հայ պաշտօնակա՛լ, մաղթանք մը ո՛նիմ, «մեր տղաքը» քու զագազիզ այս պսակը բերեն...:

ՓԻԻՆԻԿ

ՊԵՏՐՈՍ ՄԵԾ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Համառօտ բողոքատակաւ տեսչարիչն Հայ-սոսական յարարերոշրեան:

17րդ դարու երկրորդ կիսուն է որ Հայերը երեւան եւ կան Ռուսիոյ մէջ, որպէս առեւտրական յարաբերութեանց միջնորդ Մոսկուայի թագաւորութեան եւ այն ժամանակի հզօր Պարսկաստանի միջիւ:

1660 թուին Մոսկուա գնաց եւ Ալեքսանդր Միխաիլովիչին մի շքեղ գահ ընծայեց հայ հարուստ եւ իր ժամանակին անուանի վաճառական Չաքար Սարաթեանը: Այդ գահը այժմ էլ կայ, եւ պահուում է Մոսկուայի զրահանոցի արքունիքում. զարգարուած է խոշոր եւ թանկագին ազամանդներով, յակինթներով, մարգարիտներով, պերողակներով եւ շատ ուրիշ քարերով:

Օտարեկրացի հիւրը նոյն հետայն իր վրայ է դարձնում Ռուսաց արքունիքի ուշադրութիւնը: Հետաքրքրում են նրանով, նրա ազգով, ազգի զրութեամբ, արտաքին եւ ներքին հանդամանքներով, եւ պատասխան այս բոլորի, Չաքարը ասում է. «Շահը ողորմած է պէպի մեզ. վաճառահանում ենք առանց մաքսի, ազատ. միայն թէ շահը մուսուլման է, իսկ մենք քրիստոնէայ. այդ պատճառով էլ ուրախ պիտի լինինք Մեծ Քրիստոնէայ թագաւորին ծառայել», եւ ինքը խոստանում է իր մասին հօրը հետ Ռուսաց շահերը պաշտպանել Պարսից երկրի մէջ, եւ տարածել այդ գաղափարը իր հայրենակից վաճառականների մէջ:

1667ին, Օրդին Նասչօկինայի մօտ, Գրիգոր Լուսիկ-

եան եւ Ստեփան Մովսիսեան Համադանցին, որ պարազլուսի հանդիսացան «Հայկական Ընկերութեան», համաձայնութիւն կայացրին Մոսկուայի պետութեան հետ, ընդարձակ առեւտրական յարաբերութեան մէջ գնելու արեւելքը արեւմուտքի հետ Ռուսաստանի վրայով:

Այս առեւտրական շարժումը, որ քիչ յետոյ Մեծն Պետրոսի գլխաւոր նպատակներէն մին պիտի լինէր, ինքնաբերաբար կազմակերպուեց Հնդկաստանցի ու Սպահանցի մի խումբ վաճառականների ջանքով: Բայց ճանապարհների վատութիւնը, աւազակաբարոյ Ասիացիների ճակուտները ու յափշտակութիւնները արգելք եղան այդ ձեռնարկի յարատեւութեան, թէպէտ նոյն Լուսիկեան (1673) անձամբ Մոսկուա է գնում եւ երկար խորհրդակցութիւնների մէջ է մտնում թագաւորի (Արմազան Սերգ. Մորոզովի) հետ, մասնաւոր տեսակցութիւններ ունենալով նրա հետ:

Մեր ցեղը իր պաամական մեծ պերն էր որ կատարում էր այդպէս: Արդի պատմութիւնը, քննելով Արեւելքը, Սիւրիոյ պատմական շրջանների սկզբնական շաքերն մէջ որոշել է այժմեան սակաւաթիւ հայ ժողովրդին նախկին փառաւոր սկզբնաւորութիւնը, կատարած գործօն պերը եւ համաշխարհային նշանաւոր վաստակը, որ նոյնքան՝ եթէ ոչ աւելի՝ կշիռ է ստանում որքան համեմատաբար աւելի մեծ ազգերի վաստակը: Անյիշատակ ժամանակներին երեւան եկած, կազմակերպուած հայ ազգը կատարել է անուրանալի մեծ գործեր, երբ մեծ էր, երբ ուժեղ էր. ու կատարել է նոյնօրինակ գործեր եւ այն ժամանակ էր երբ ցրուած մի հօտ էր զուրկ հովուից: Ինչպէս ասում է Պրոֆ. Գրէն, Հայ ազգը, շնորհիւ իր ճկուն, ընդգրկող, հետաքրքիր ընդունակութեանց եւ աշխարհագրական զիրքի, փոքր-Ասիայի ժողովուրդների մէջ սերմանեց Եգիպտական քաղաքակրթութիւնը, ազգեց Յոնիական Յունաստանի վրայ: Մարաց ժամանակ, երբ նա տիրում էր վերին Եփրատի եւ Արաքսի հովիտներին, ձեռնամուկ է լինում կովկասեան քաղաքակրթութեան զարգացման, եւ ներմուծում է այնտեղ պարսկական եւ մակեդոնական կրթութիւնը: Հոռմէական շրջանին, հոռմէական քաղաքակրթութիւնը տարածում է Պարսկաստանի եւ կովկասի մէջ, ուր եւ, քրիստոնէութիւնը ընդունելուն պէս, տարածում է այդ վարդապետութիւնը, հիմնում է զպրօցներ, որոնց ուսուցիչներ է տալիս, եւ վերջապէս ստեղծում է կովկասեան ընդարձակ զրականութիւնը: Իսկ բիւզանդական կայսրութեանը, Հայը սուեց իրաւագէտների մեծ թիւ, պետական մեծ պաշտօնեաներ, եւ մինչեւ անգամ կայսրեր:

Քայքայուած, ջախջախուած թաթար-Սելջուկներից, Հայ ժողովուրդը գործունէութիւնը դարձնում է հիւսիս, իսկ հարաւում հիմնում է Ռուբինեան ինքնավարութիւնը, որ մեծ ծառայութիւն մատուց խաչակրաց արշաւանքներին, սովից, վտանգից եւ թշնամու յարձակումներից քանիցս պտտուպարելով խաչակիր զօրքեր եւ շատ թագաւորներ:

Այս իսկապէս մեծ գործերը Հայ ազգը այն ժամանակ կատարեց երբ քաղաքական փոքր ի շատէ ոյժ կամ իրաւունք ունէր: Բայց այժմ, 18րդ դարու ճիշդ սկիզբում, Հայ ժողովուրդը զուրկ իրաւունքից, գոյքից եւ անձնական ապահովութիւնից, Արարների, Մելիկների եւ տանկական յորձանքներից յետոյ սրտնք անընդմիջարար միմեանց յաջորդեցին, ընկած երկու մահմետական տիրապետութեան տակ, կատարում է իր ջլատ եւ տկար ուժերով մի աւելի մեծ գործ. «Մտնում է զուտ քաղաքական յարաբերութիւնների մէջ Ռուսաստանի թագաւորութեան հետ», որոնց համաշխարհային նշանակութիւնը կայանում է նրա մէջ որ «Հայերը միջնորդ են հանդիսանում կովկասում Ռուսաց քաղաքակրթութիւնը մտցնելու»:

Պարսիկներին և Տաճիկներին գերի վարձած, նրանց ճիրաններում ձմրուող մի բուն ժողովուրդ, որի երազը մշտնջենաւոր ապահովութիւն եւ անսպառ հովանաւորութիւն էր, չէ որ կ'անէր ամէն բան, կ'ընդունէր ամէն տեսակի զոհողութիւն, եթէ միայն ուժեղ մինը, հեղինակաւոր մինը հովանաւորելու պատրաստակարարութիւն ցոյց տար նրանց, որպէս արեց Ռուսաց պետական այն մեծ և ստեղծագործող մարդը, որին արդարեւ ուղղում է «մեծ» անունը առջ. — Պետրոս Մեծը եղաւ այդ մարդը, Հայոց ազգի 18րդ դարու պահպան հրեշտակը:

Պետրոս Մեծի վերաբերմունքը դէպի Հայ ժողովուրդը շատ բարեացակամ էր: Արժուէ՛հայեաց կայսեր ուշադրութիւնը այնքան էր լարուած Արեւելքը ձեռք բերելու և Ռուսաստանը Հնդկաստանի հետ կապելու ծրարիքներով, եւ Հայ ժողովուրդը, որպէս իր առաջադրութիւններին նպաստող ամենակարող եւ ընդունակ ազգ, այնքան էր շլացրել իրան, որ մի բոպէ չկարողացաւ խելամուտ լինել թէ ի՞նչ էր Հայ ժողովրդի «իսկական պահանջը», եւ ի՞նչ են թելադրում իրեն այդ պահանջի գործօն գետպանները, կանգալիները եւ բերանացի դիմումները:

Պետրոս Մեծի Արեւելքին միջամուտ լինելը ոչ մի աշխարհակալական ձգտում կամ նպատակ չունէր, այլ սոսկ Ռուսաստանի առեւտրական դրութիւնը բարդաւաճելու համար էր: Կայսրը հետաքրքրուեց արեւելքով այն ժամանակ միայն, երբ հայ գետպանախորհրդը մին միտի հոտելից կլումուտ էին անում Ռուսաց արքունիքը, եւ իրենց ինքնօրինութեան ծրագրերների հետ թէ՛ գրաւոր և թէ՛ բերանացի բացատրութիւններ էին տալիս արեւելքի վաճառաշահ դրութեան եւ օգուտների մասին:

Կայսեր մօտ եկողները Հայ ժողովրդի հարուստ եւ ամենամեծ մարդիկն էին: Մելիքները եւ կաթողիկոսները թանկագին ընծաներ էին ուղարկում կայսեր, դրամական մեծամեծ խոստումների հետ: «Ե՛կ, գրում էին միաբերան, ազատիր մեզ մահմետականների ձեռքից, տուր մեզ ազատութիւն, հովանաւոր հանդիտացիր մեզ, մենք կը պահենք մեզ համար զօրք, կը հողանք մեր բոլոր ծախքերը», եւ մինչեւ անգամ խոստանում էին Ռուսաց զօրքերը Հայաստանում պահպանել:

Եթէ այս ծրագիրը գիտակցօրէն առաջ տարուէր, թէ՛

Հայոց ժողովրդի փայփայած յոյսերը որոշ չափով իրագործութեան կը մօտենային, եւ թէ՛ Ղարաբաղի Մելիքութիւնը կը յարատեւէր:

Բայց այդ գործունէութեան ուղղութիւնը եւ բնաւորութիւնը յաճախ փոփոխում էր: Հայ ժողովուրդը ուզում էր ազատուիլ գերութիւնից եւ հովանաւորուիլ քրիստոնեայ տէրութիւնից. իսկ նրան ներկայացուցիչները աւելի հեռուն գնացին. նրանք աշխատում էին անկախ կամ ինչպէս իրենք էին անուանում՝ ազատ կառավարութիւն ձեռք բերելու: Եւ զարմանալու չէ, որ այդպէս էլ պէտք է լինէր. նեղը ընկած, բայց դեռ «Մելիքային» փառքի փոշիների տակ, Հայ իշխանները կամ աւելի ճիշդ խամսայի մելիքները, գաղտնի յարաբերութեան մէջ մտած էջ միաձնի հայրապետանոցի հետ, գաղտնի գումարումներ էին ունենում Գանձասարի վանքում, ուր ե՛ւ խորհում և վճռում էին ամէն ինչ: Սոքա՛ էին հրահանգում գետպանութիւնները այս ինչ կամ այն ինչ խնդրի մասին խօսալու կայսեր եւ եւրոպական պետերի հետ: Եթէ թերթէք այս հայ մեծամեծների «առ ոտս» կայսեր գրած կտրուակներն ու աղերսազրերը, կարող էք զարմանալով նկատել թէ որքան աղքատ են եղել այդ մարդիկ գրագիտութիւնից, եւ սակայն ի՞նչ աստիճանի քաղաքագիտական ընդունակութեամբ պարզեւտրուած: Այդ զարաբաղցերէն գրաբարխառն աշխարհաբար գրութիւնները այնքան անգոյն են, որ ժամանակի ակնասցներին տակից քննելով, շատ անխորժ եւ մեր անձնասիրութեան գիպչող հետեւանքների կը հանդիպինք: Գուցէ մասամբ այս, մասամբ էլ ժամանակի սեղմ հանգամանքները, երբ զուլինները կորցրած ամէն մինը մի տեսակ միջոց ունէր իր կենսական կամախային դրութիւնը պահպանելու, ծնեցին քաղաքային մի այնպիսի բոպէ, յակամայից երբ յոյսեր փայփայեցին ոչ միայն բարօրութիւն, այլ եւ անկախ մի դրութիւն ստեղծելու:

Թերեւս ստեղծուէր այդ, թերեւս Դաւիթ-բէկը եւ իր յաջորդները յաջողէին մեկնած պահել Հայոց դօշը, բայց մեր կարծիքով այս այն ժամանակ կը լինէր, երբ փոխանակ զոնէ զուտ պետական կոչնակները ձայնելու, զարկէին Ղարաբաղի ամէն մի մելիքի զուտը եւ նրանց հաշտութեան հրաւիրէին... և կը կատարուէր այդ, որովհետեւ Պարսից արքունիքը Հայոց քաղաքական շարժումներից չէր կասկածում, եւ խրախուսում էր Դաւիթ-բէկին, որ ոչ թէ մատանդական իշխան էր, այլ պատահական մի իշխող, եւ ջանահնար էր լինում յարատեւելու: Փաստերը սորա ապացոյցն են. իսկ բնորոշել կարող են այն բարեկամական յարաբերութիւնները, որ վաղուց հետէ տիրում էին Պարսից գրան եւ Հայոց իշխանների արքունիքների միջեւ: Պարսից եւ Հայոց յարաբերութեան թուահամարը աւելի մեծ տոկոս է աալիս բարեկամական արտայայտութիւնների քան թշնամանքի:

* * *

Ինչպէս ցոյց տուինք, Հայը շատ վաղ ժամանակն էր իր անձնաւորութիւնը Ռուսաց, եւ մուտք է գործել Մոսկովիներէ արքունիքը, զեռ Պետրոս կայսեր պապերի օրով: Մի ժողովուրդ, որի ընդունակութեանց եւ ձգտումներէ օրինակները պատում էին Պետրոսի կայսրութեան քաղաքներում, որ գնում, վաճառում, եւ արտահանում էին Եւրոպա, չէր կարող լինել կայսեր հայեացքից, որ դիտում էր, եւ մեծ ընդունակութեամբ, միշտ լաւը, օգտաւէշը եւ ճշմարիտը որոնելու համար:

Մեծն Պետրոս Եւրոպա կատարած ճանապարհորդութեան ժամանակ, ճանօթացել էր արդէն մէկ քանի հայ վաճառականների հետ, որոնք երկար ու բարակ պատմել էին նրան հայ ժողովրդի այս ու այն ընդունակութեանց, առեւարական լայնածաւալ գործունէութեան մասին. «Բայց, աւելցրել էին, մենք գտնում ենք քաղաքական շատ անապահով գրութեան մէջ: Երբ մենք տէր ունենալինք, զլուս ունենայինք, այն ժամանակ կարող էինք մեր բաղաւորութեամբ պարծենալ եւ փառք տալ Աստուծուն:»

Եւ այսպէս, Մեծն Պետրոս, իր ամենաեռանդուն գործունէութեան շրջանում, — արտաքին եւ ներքին բարեփոխումների մէջ, — յիշում է հայ ժողովուրդը եւ մտածում է նրա մասին:

1711 թուին, կայսրը սինոդական ցուցմունքով զեկուցեց. «Որքան հնարաւոր է, զբաւել Հայերին, եւ հարկաւոր ժամանակ թեթեւացնել հոգսերը, որով եւ հնար սրուի նրանց մեծ թուով մեր երկիրը գաղթելու:» Նոյն թուի մայիսի 2ին, հաստատում է այն բոլոր արտօնութիւնները, որ ստացել էին Հայերը մինչեւ Պետրոսի ժամանակները:

Արեւմտեան պատերազմները զազարելուց յետոյ, Պետրոս մտածեց արդէն զլուս բերելու արեւելքի խնդիրը: Ինք մտադրուել էր կասպից ծովի եզերքին ամուր նաւահանգիստներ հաստատելու առեւտրի համար: 1715ին իր ամենաընդունակ գործիչներից մինին՝ — Վալինսկուն, — ուղարկեց Սպահան, Պարսկաստանի մայրաքաղաքը, որպէս զեսպան:

Սէֆեան տունը մտնում էր իր վախճանին: Նա արդէն իր ամենաբարձր գրութեան հասած լինելով — Ծահ Աբբասի օրերով, — կամաց կամաց դիմում էր անկման: Այդ տան վերջին ներկայացուցիչը Ծահ-Սուլթան-Յուսէյն (1694-1722) վերջին շահերի բարոյական անկման մարմնացումն էր. լսենք կայսեր զեսպանի կարծիքը անոր մասին. «Այժմ այնպիսի մի զլուս է, որը ո՛չ թէ ինքն է տէր հպատակներին, այլ հպատակների հպատակն է, եւ կարծում եմ, ոչ թէ թագաւորների այլ հասարակ մահկանացուների մէջ, հազիւ գտնուի մի այդպիսի յիմար:»

Աւղաններն ապստամբեցան, Ղանդահարի Միր-Մահմուդ խանը՝ արշաւանք գործելով, տիրեց Պարսից մայրաքաղաք Սպահանի, եւ շահին դահլիճէց անելով, ինքը թագաւոր դարձաւ (1722): Կովկասեան կատաղի լեռ-

նականները ներս խուժեցին եւ աւերեցին Վրաստանը, եւ պարսկական այն երկիրները, որ Սեւանայ լճի եւ Երասխի մէջն են ընկնում: Օսմանցիք երկու տարուայ մէջ վերցընում են Նախիջեւանը, Երեւանը, Թիֆլիզը, Գանձակը, մինչեւ Ղարաբաղի մելիքային հողերը. տիրում են նոյնպէս ամբողջ Ատրպատականին:

Տեսնելով որ քայքայուած Պարսկաստանը բաժանում է, հասնողը իր պատան էր տանում. Ղարաբաղի Մելիքներն էլ, որ մինչեւ այդ ատեն աւատական իշխաններ էին համարում, մտածում են թոթափել Պարսկաստանի լուծը եւ Հայոց անկախ պետութիւն հիմնել: (*)

Միւս կողմից Վալինսկին հող էր պատրաստում կայսեր արշաւանքի համար: Ամենամանրակրկիտ, քաղաքագէտի համար մեծ կարեւորութիւն իսկ զօրապետին անհրաժեշտ ուղեցոյց եղող հարցմունքները՝ կայսեր ինքնազիր նամակների մէջ զարմանալի հետաքրքրութեան եւ զործագէտի հարցասիրութեան ցուցիչ են. — «Քննել բոլոր նաւահանգիստները, — գրում էր կայսրը, — ո՞ր մեծ գետերն են թափում կասպից լճի մէջ, եւ նոցանից իւրաքանչիւր սօքան է նաւարկելի: Չըկա՞յ արդեօք Հնդկաստանից հոսող մի գետ, որ այդ լճում թափուէր...: Համոզել շահին, որ զրդէ կամ հրամայէ հայ վաճառականներին, ամբողջ իրենց մետաքոն առեւտուրը արտահանեն ջրային ճանապարհով ուղղակի Պետերբուրգ փոխանակ ուղտերով տաճկական երկիրները փոխադրելու: Տեղեկութիւն տալ «Հայ ժողովրդի» մասին, շատ է արդեօք նա, ի՞նչ տեղերումն է նա բնակում, ունի՞ն արդեօք նշանաւոր մարդիկ իշխաններից կամ վաճառականներից, սօքէս են նոքա վերաբերում դէպի կայսերական մեծութիւնը, նոցա հետ քաղցր վարուել եւ հակել դէպի մեզ:»

Այսօրինակ նախաձրագրած շարժումներով 1722 թուին ամառը Հաշտարխան է հասնում: Յուլիսի 19ին զուրս են գալիս իրենց տեղերից եւ հազիւ օգոստոսի 23ին տեղ են հասնում: Հաշտարխան զօրքը երկուսի է բաժանում. հեծեալ զօրքը ծովեզրով, կայսրը հետեւակ զօրքի հետ նաւերով հասնում են Ասարագոնի նեղուցը:

Կայսեր բարձրագոյն անունը՝ եւ անձնաւորութիւնը եւ րաշխաւոր էին մի կատարեալ յաջողութեան: Շուրջանակի, փոքրիկ փոքրիկ խաները, բէկերը, հրոսակապետները հնազանդում էին հզօրի կամքին, իսկ հակառակողներին ոյժ կար հպատակեցնելու:

Կայսրը հասնում է Գերբենդ, եւ հաստատելով իր իշխանութիւնը այդտեղ, շտապում է վերադառնալ:

Շամախում, Հայերը եւ Վրացիք սպասում էին կայսեր բայց մթերք փոխադրող առաջատանաւերը կասպից ծովի փոթորիկներին զոհ են գառնում, եւ խելատես կայսր-զօրապետը հեռու Ճինկիսխանեան մակարուծութիւնից շտապում է թողնել այդ «գժուարին տեղերը» եւ Պետերբուրգ գնալ, սակայն առանց զազարելու նոր եւ նոր հրահանգներ ու դիտողութիւններ անել արեւելքի մասին,

(*) Խամսայի Մելիքութիւններ. — Րաֆֆի, էր. 267

որով կարելի է նշմարել կայսեր նպատակը յետ սլայ կըր-
կին արշաւանքի:

Պարսկական շէնքը աւելի է ժամանում իր քայքայման,
եւ միանգամ ընդմիջտ սպանում է իսպառսպուռ խոր-
տակելու Շահն-Շահերի հինաւուրց գահը: Աւղաննե-
րը շարունակում են անպատիւ ասպատակել երկիրը:
Օսմանեան սուլթանը իրան իրաւացի ժառանգ է հրատա-
րակում Պարսից պետութեան. եւ պատրաստութիւններ է
տեսնում կցել ապամայ Պարսկաստանին « առիւծի թա-
զաւորութեան » շուրջկասպեան երկիրներն ու կովկասը:
Քուրդերը չեն դադարում աւարառութեան խաղալիք դար-
ձնել թաւրիզը:

Պարսկական խառնակ այս դրութեան մէջ, հրաւիր-
ւում է Պետրոսի առանձնակի ուշագրութիւնը հայ ժողո-
վրդի վրայ. նրա դրութեան անապահով վիճակի մասին
եսանդուն խորհրդակցութիւններ էր սկսել Հայ Խորայել
Օրի անունով մի հարուստ եւ ազնուատոհմ մարդ Պը-
նոշեան շառաիդից:

Օրուան նորութեանց սիրահար արեւելեան ժողովրդի
խօսակցութեան նիւթ էր դարձել « ուռուների » Պարսկաս-
տանի տիրելու լուրը, եւ այն թէ քրիստոնեաները պէտք է
է անկախ իշխանութիւններ ստանան:

Հայ ժողովուրդը սուր ակննջ ունի իրեն նպաստաւոր
բաները լսելու. իսկ հայ մեծաւեճները չեն յապաղում
նախապատրաստութիւններ տեսնելու եւ հող պատրաս-
տելու: Ս. Էջմիածնում, Յակոբ Զ կաթողիկոսի նախա-
դահութեամբ խորհրդակցութեան մէջ են մտնում վեցը
հոգեւոր եւ վեցը ալ աշխարհ անձինք, եւ որոշում են
երեք հոգեւորական եւ երեք աշխարհական անգամներով,
կաթողիկոսի հետ դնալ Հոսով, Պապի մօտ, հրաւիրել
նրան մի խաչակրաց արշաւանք կազմելու մահմետական-
ների դէմ:

Պէտք է սակայն այստեղ աչքից բաց չթողնել մի դառն
ճշմարտութիւն, որ միանգամայն հաստատեցին նորատիպ
պետական դիւանական հետազօտութիւնները, այն թէ
Հայերը թուրքութիւն ունեցան հակուելու այն կաթողիկ
պրօպագանդիստների համազսմներին, որոնք յոյսեր էին
հալում եւ ծօրեցնում հայ մեծերի մտքին մէջ, իբր թէ
Պապը կարող է հրամայել եւրոպական պետքին, որ միջա-
մանն Հայերի ազատման գործին:

Ահա այսպէս եղաւ ազատման փայլալայուող յոյսերի
սկզբնաւորութիւնը: Եւ այս ուղղութիւնը շարունակուեց
մինչեւ այն ժամանակ երբ հիւսիսում աւարտուեց երկա-
րատե Եվեպական կոնիւր:

Եթէ Հայերը ոչ իսկ կամովին, այլ առերես էին հը-
րաւիրու Պապին՝ խոստանալով ընդունիլ կաթողիկոսութիւն,
այդ եւս չէ արդարացում նոցա, որովհետեւ գործին ձեռ-
նարկող ամբողջ մի բաւոն ժողովրդի հայրապետն էր:

1678 թուին, այդ պատգամաւորները (որոնց մէջն էր
Խորայել Օրին,) Կ. Պոլիս հասնելուն պէս, վախճանում է

(*) Տես «Նոր կեանք», 1898 թիւ 17:

Յակոբ կաթողիկոսը, եւ միւս պատգամաւորները ստիպ-
ւում են վերադառնալ հայրենիք, բացի Օրիից, որ անց-
նում է Վենետիկի վրայով Ֆրանսիա: Եւրոպայի մէջ իր
կատարած ձեռնարկների մասին երկարօրէն գրուեցաւ այս
սինակների մէջ (*). թէ ինչպէս Ֆրանսիայի Լուի ԺԴ
թագաւորէն յուսահատ, անցաւ Բալալինայի Յովհան-
նէս Վիլհելմ իշխանի մօտ, որը կրցաւ իր ծրագիրներին
հաւանեցնել, եւ թէ՛ ինչպէս դնաց Մեծն Պետրոսի մօտ,
նրա հետ կարգադրելու Հայաստանի օգնելիք եւրոպական
բանակին վերաբերեալ ամէն գործերը:

Ճիշդ 1701 թուին, Օրին ներկայացաւ Գօլօլին նա-
խարարին, ներկայացրեց այն ծրագիրը, որով ուզում էր
վերցնել Պարսից տիրապետութիւնը: « Հայաստանում,
ասում էր նա, — 17 նահանգ կայ, որոնցից կը հաւաքուի
30,000 զինուոր. տաճկահայերն էլ կը դան օգնութեան,
իսկ Պարսից Շահը 38,000 ից աւելի զօրք չէ կարող հա-
ւաքել: Այժմ ամենայարմար ժամանակն է Պարսկաստա-
նին տիրելու: » Օրին այնուհետեւ դիմում է նամակով նոյն
ինքն կայսեր, յիշեցնում է այն մարգարէացումը, թէ
« վերջին ժամանակները անհաւատները կը կատաղեն եւ
կը ստիպեն քրիստոնեաներին իրենց վատթար օրէնքը ըն-
դունելու: Այն ժամանակ, — շարունակում է մարգարէու-
թիւնը, — Մոսկուայի օգոստափառ տանից կը դայ այն
մեծ թագաւորութիւնը որը կ'ազատէ Հայոց անհաւատ-
ների ձեռքից »:

Հայ ներկայացուցչի առաջարկը մեծ համակրանօք ըն-
դունեց Պետրոս Մեծ: Բայց Եւեպական պատերազմները
կայսեր ամբողջ ուշագրութիւնը իրենց վրայ էին պահում.
բայց եւ այնպէս կայսրը պատասխան տուեց, որ « պա-
տերազմից յետոյ ակպատձաւ կը ձեռնարկուի Հայոց ա-
զատման գործին: »

Պետրոսը Օրիի շնորհեց ցնդապետի կոչում, եւ Պարս-
կաստան ուղարկեց նախապատրաստական նպատակնե-
րով, բայց դեռսպանի անուան տակ: Այս պետականութիւնը
շատ շքեղ եղաւ (1707 թ. յունիսին): Շքախմբի թիւը
մօտ 50 հոգի էր համարում:

Ինչքն չէին խօսում Պարսկաստանում. կասկած չկար
որ այդ պատգամագնացութիւնը քաղաքական նպատակով
էր կատարում. Ռուսաց կայսեր զեսպան, սոլիօմիլի...
եւ այլն... Խորայել Օրիի անուան տառերը տեղափոխե-
լով ստանում էին որ Օրին « պէտք է թագաւոր լինի »:

Կարծես նախատեսելով այդ բոլորը, կայսրը հրա-
հանեց Շահին. « Բարեհաճեցէք մեր ցնդապետ Խորայել
Օրինն մեր թագաւորական հրովարտակով թոյլ տալ
պատշաճաւոր պատուով Ձեր դահլին ժամանալու, ընդու-
նիլ նրան, սիրալիլ կերպով լսել, ցոյց տալ ամէն շնորհք
եւ նրա արժանաւոր խնդիրքին բաւարարութիւն տալ »:

Կայսերական այս հրովարտակը խորտակեց այն բու-
լոր սաղարանները որոնք Պարսից պաշտօնատարները
սարքել էին անպատուելու եւ չընդունելու Օրինի:

Օրին փտաւոր ընդունելութիւն դտաւ Պարսից ար-
քունիքում:

կատարելով իր գետնապատկերը Օրին մեծամեծ ըն-
ծաներով, բազմաթիւ նոյնանունով եւ հարուստ իրերով վե-
րագանալ է պատրաստում Ռուսաստան (1710). նրա
հետ էր եւ Մինաս վարդապետը, երկու եպիսկոպոս, 12
մետաքսագործ սրտնք տանում էր Մոսկուա զործարան բա-
նալու:

Երկու առաջատանաւերով դուրս եկան Պարսկաս-
տանի սահմաններից: Նաւարեկութեան շափ փոթորիկ
եղաւ. նաւերից մինը երկու ամիսից յետոյ միայն Հաշ-
տարխան դուրս եկաւ, իսկ միւսը, որի վրայ ինքն էր, բա-
մին Նիզարաթ բռնեց: Բերած նուէրներից մի մասը նաւա-
պետներն են սեփականում, իսկ մի մասն էլ մաքսատան
պաշտօնեաները. 1711 թուի սեպտեմբերին, թագաւորա-
կան հրամանը միայն կարողացաւ ազատել տալ իրերի մի
մասը, ճանապարհածախս վճարել և ապահով ճանապարհել
Մոսկուա: Բայց նոյն թուի օգոստոսին, խոր վշտի ու
նեղութեան մէջ, վախճանեցաւ Օրին, ըստ Մինաս վար-
դապետի — թունաւորուելով:

Բայց Օրինի շարժումը կենդանի եւ դեռ յուսատու ՂԵ-
րոշմ դրեց հայ սրտերի մէջ. մեռաւ Օրին, բայց կենդանի
էր այն զործը, որ իրեն ծնունդ տուեց:

Օրինի մասին այն էլ պէտք է ասել, որ արած ահազին
ճանապարհածախսերը բոլոր ինքն էր հոգում, առանց
ժանրանալու սրա նրա վրայ:

Ժողովրդի շարժման բնաւորութիւնը կերպարանա-
փոխուեց եւ ուրիշ գոյն ստացաւ:

Գործի դուրս են անցնում հողերու կոչում ունեցող
անձինք: Գլխաւոր գործիչ զարձաւ Մինաս վարդապետը:
Սա եւս ընթանում է համարեա նոյն շաւղով, որ հարթել
էր Օրին: Ազգասէր վարդապետը ծրագրին աւելացնում է
որ Նիզարաթ նաւահանգստի մօտ անհրաժեշտ է մի մեծ
վանք հաստատել որ իր շէնքով միեւնոյն ժամանակ ամ-
բոցի սեղ ծառայէ:

Մինաս վարդապետը 1716 թուին թաղապետութիւն է
ստանում Հայաստան վերագանալու, նախ Օրինի յափըշ-
տակուած իրերը սրտնելու, ապա վերահաստատելու Հա-
յերի հետ կապերը: Պետրոս մեծը հրահանգում է Վօ-
լինսկուն. «Որովհետեւ յանձնարարուած է վարդապետին
Պարսկաստան դնալ վախճանուած Օրինի իրերը սրտնելու
համար, ուստի հարկաւոր օգնութիւնը հասցրէք նրան,
առանց կասկած յարուցանելու:»

Վարդապետը գնում է Գանձասար, որտեղ Եսայի կա-
թուղիկոսը նրան արքեպիսկոպոսական աստիճան է տա-
լիս, եւ նոր պատգամաւորութիւն կազմելով ճանապարհ է
դնում գէպի կայսր Պետրոսը:

Կաթուղիկոսական պատգամաւորութիւնը նոր արքե-
պիսկոպոսի միջոցով յայտնում է, որ կաթուղիկոսը հա-
ւատարիմ մարդիկով պատրաստ է եւ կայսեր մարդկանց է
սպասում. ասում է գրութեան մէջ. «Ինչպէս Ձեր Մեծու-
թիւնը բարեհաճել էր հրամայել եւ կը հրամայէք, նոյնպէս
կ'աշխատինք Ձեր ցանկութեան համաձայն եւ կարողու-
թեան շափ, մեր ամբողջ սյծով, մաքուր սրտով, մեր խոս-

տացածին զէս լրիւ պատրաստել ամէն պաշարեղէն, ինչ
որ հարկաւոր կը լինի Ձեր պետութեանը:»

1722 թուին Թիֆլիզի եպիսկոպոսը յայտնում է Ռու-
սաց արքունիքին, որ 100 հազարուստ (.) հայկական
գորքը պատրաստ է միանալ Ռուսաց զորքերի հետ, նրանց
Շամախու վրայ շարժելու ժամանակ:

Պետրոսի համակրանքին գէպի հայկական շարժումը
որոշապէս ներգործելու եւ վճռականութեան դիմելու, մեծ
խոչընդոտ է հանդիսանում օտմանեան պետութեան սպառ-
նալի նոր քաղաքականութիւնը, որը բացորոշ կերպով
ձգտում էր տիրապետելու որպէս Պարսկաստանին, նոյն-
պէս եւ կովկասին: Այդ որոշումների եւ դոցա շարժմանը
հարկապէս համար անհրաժեշտ էր եռանդուն եւ արմա-
տական միջոցներ ձեռք առնել. բայց Պետրոս կայսրը պա-
տերազմական շարժումներից ձեռնպահ մնաց, եւ արտա-
յայտում էր միայն կատարեալ ինձամբ Հայերին պաշտպա-
նելու:

Ներսէս կաթուղիկոսը անմիջապէս մի կանգալով
կայսրին է դիմում եւ խնդրում նրա համաձայնութիւնը:

Անհետեանք չէ մնում այս դիմումը, կայսրը հրո-
վարտակ է ուղարկում «Պարսկաստանում բնակող հաւա-
տարիմ Հայ ժողովրդին» — որի մէջ խոստանում է ազա-
տել նրանց մահմետականների ձեռքից, հէնց որ Ռուս-
ները հաստատուին Կասպից ծովի ափերի վրայ. «Եթէ
ճնշումը անտանելի է, թող նշանաւոր մարդիկը այն բա-
ղաքներում պատասպարուին, սրտնք Ռուսաց զորքերով են
զրաւուած, իսկ ժողովուրդը համբերութեամբ թող սպասէ
իր բնակատեղիներում, մինչեւ Ռուսաստանի զօրքը պատ-
րաստուէ նրան ազատելու համար:»

Օտմանցոց հետ կապած զաշը արդելում է կայսեր
վճռական միջոցների դիմելու, եւ, երկմտութեան մէջ,
յոյս է տալիս Հայոց:

1723ին, մայիսի 14ին Պետրոսը զեկուցանում է
սինօզին. «Կանչել սինօզը հայ կօմպանիայից երկու կամ
երեք հասկացող մարդիկ եւ յայտնել նրանց որ աշխատին
Ռուսաց վաճառականներին հետ աւելուարը բնորոշու-
կել:»

Իր կ. Պալսի գետպանին նա ի միջի այլոց ասում է
նամակի մէջ. «Մեզ մօտ եկել են հայ պատրամաւորներ
եւ խնդրում են զիրենք պաշտպանել իրանց թշնամիներ
րից: Եթէ մենք չենք կարող իրադրծել իրանց ծրա լիրը,
ուրեքն պէտք է թոյլ տալ որ նրանք տեղափոխուին մեր
նոր երկիրը, որ Պարսկաստանից վերցրինք: Մենք նրանց
պատասխանեցինք, որ Դրան հետ կապած պայմանի պատ-
ճառով անկարելի է նրանց զօրքով օգնել. թոյլ տուինք
տեղափոխուել մեր Կասպեան երկիրներում, եւ ուղարկե-
ցինք մեր յուսատու հրովարտակը: Եթէ Տաճիկները ձեզ
բան ասեն այդ մասին պատասխանեցէք որ «մենք ի սեր
քրիստոնէական չեմք կարող մերժել Հայերին, որպէս
քրիստոնէակաների:»

Այս նշանաւոր բաները գրուեցան այն ժամանակ,

երբ այդ մեծ մարդու, մեծ կայսեր, և մեծ բրիտանացի օրերը համարուում էին:

1724 թ. հոկտեմբերին Եսայի և Ներսէս կաթողիկոսները յուսահատութեան ոգով մի աղերսագիր էլ են ուղարկում, որտեղ ասում է. — «Գտնուում ենք մեծ անապահովութեան մէջ, կարծես մոռացուած լինինք ձերը մեծութիւնից, որովհետեւ երեք թէ շորս տարի է արդէն, որ ապրում ենք ցրուած, անտիրական: Մինչեւ հիմայ չորս կողմից թշնամիներով շրջապատուած կարողացանք չափ պաշտպանուեցանք, բայց հիմա եկել է տաճկաց բազմաթիւ զօրքը և զրաւել է Պարսկաստանի շատ գաւառները: Յորդ արցունքներով ենք ինչորում, որ մեզ օգնէք, որքան կարելի է շուտ, թէ չէ Տաճիկները երեք ամսում կը տիրանան ամէն ինչի և Բրիտանացիներին կը խորտակեն բոլորովին:»

Բայց այս թուղթը երբ տեղ հասաւ մեծ մարդը արդէն չկար:

Երբ կայսրը տիրեց կասպից ծովափի մի քանի քաղաքներին, հրահանգեց զաղանի կերպով հեռացնել ոչբրիտանացիներին և նրանց տեղ Հայերով լեցնել:

Այս մի հանգամանքը կայսրը արգարացուցիչ միջոց կը գտնուում իր յուսադրութիւններին:

Հայերը առաջարկում էին ազատել իրենց մահմետականների լծից և հովանաւոր հանդիսանալ իրենց. այդ ինչիւրքը կատարուեց բայց ոչ իրենց ծրարի սպասածի նման. այլ, որպէս տեսանք, կայսրը մի քանի քաղաքների տիրեց և այն տեղ հրաւիրեց Հայերին բնակուել: Իսկ վերջերը ուղղակի առաջարկութիւն և ջանքեր արեց մեծ մեծ հայկական զաւոթներ հիմնել Ռուսաստանում, և զազթեցնել Հայերին Ռուսաստան: Այս ծրագիրը յղացաւ ազատարար մեծ բրիտանացի, բայց իրադրձուեց միայն նրա անմիջական յաջորդների օրով:

Լուստն.

ԱՐՇԱԿ ՐԱՅՅԻ

ՃԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

ՀՈՍԱԿԻ ՄԸ ՅԻՇԱՏԱԿՆԵՐԷՆ

Է

Լեւեռեքեկ վար. — Ռոշերի արկածը. — Հասան Օվայի ձարնուռն վրայ. — Վերադարձ:

Ձիրենք հալածողներուն ձեռքէն ազատելէ յետոյ հրոսակները շարունակեցին յառաջանալ: Անօթութենէ շատ կը նեղուէին. քանի մը օրէ ի վեր հացի երես տեսած չունէին, միայն մասուրով ու մորմենիով ապրած էին, միշտ

շարժումի մէջ գտնուելով հանդերձ: Ճամբան երկու հովիւ հանդիպեցան. Պէյլերեան և Եէկէն Պաղտասար լեռնէն վար իջնելով անոնցմէ հաց ուզեցին. անոնք ալ ինչ որ ունէին տուին, բարակ սաճէ երկու հաց միայն, ու սկսան հարցուփորձի. — Ո՞վ էք, ո՞ւրի՞նչ կուգաք, ո՞ւր կ'երթաք: Հրոսակները պատասխանեցին թէ ուրի վաճառականներ են, Ախնայ կողմէն կուգան, ձորերու մէջ ընկուզի ծառեր կը փնտռեն, ու Տիվրիկ կ'երթան: Հովիւները պատասխանեցին խորհրդաւոր ձայնով.

— Չէ՛, աղաներ, դուք ուրի վաճառականներ չէք նմանիր. մենք գիտենք ո՞վ էք. հրամայեցէք, մեր գեղը մօտ է. դուք հիմակ անօթի ալ էք. երկու պատառ հացով չըլլար. հանգստացէք, ճաշեցէք և յետոյ պացէք:

Պէյլերեան պատասխանեց թէ ծամանակ չունին, շուտով Տիվրիկ պիտի երթան: Ու Տիվրիկի ալ ճամբան բռնեցին. բայց հովիւները աչքէ հեռացնելէ յետոյ ետ դարձան ձորի ճամբով իրենց գիտցած տեղերը երթալու: Անդիկէն ալ զօրքերը կը հասնէին, և հովիւներէն տեղեկանալով որ հրոսակները Տիվրիկ յառաջացեր են իրենք ալ ան կողմերը կը վազէին:

Որքան ալ վտանգալից վայրերէն հեռացած էին բայց և այնպէս կը զգուշանային ուրիշի երեւնալու, թէև չափազանց անօթի: Նախապէս եղած բոլոր կարգապարտութիւնները խանգարուած էին: Ո՛չ ոք կրնար փախտաւորականներուն մօտենալ, կամ որոշուած տեղ մը անոնց ուտելիք հասցնել: Մուլթանը խիստ հրամաններ զրկած էր հայ հրոսակներուն ձերբակալութիւնը կամ մահը սպահանջելով: Բոլոր զեղացիները, հայ թէ թիւրք, պարտաւորուած էին փնտաւորել ելլել, Հայերը՝ ձնշուծի ներքեւ ու զծկամակութեամբ, թիւրքերը՝ սիրայօժար:

Աս բոլոր խտրութիւնները տեսնելով հրոսակապետը վճռեց վերջնական միջոցներու գիծել, տեղն ու տեղը կուտիլ թշնամիին հետ: Պահուած ուսմբերէն միայն և բերք հաս մեծ լեցուած էին, առանց քարսիւլի՝ և լերան մը պապաթը թաղուած: Օրին մէկը երբ ա՛լ շրջակաները չափազանց իրարանցում կը տիրէր, ամէն անկիւնէ աղմուկները ականջ կը խլացնէին, փողերու նշանացի ձայներէն զեղացիներն ու զօրքերը մէյ մը աս մէյ մը ան կողմը կը վազվառէին, Պէյլերեան որոշեց ատ լեռը մնալով վերջնական կոխը մղել: Հրոսակները հետեւաբար հանեցին ատ երեք ուսմբերը, քարսիւլները անցուցին, ու կազմ և պատրաստ սպասեցին թշնամիին, թէև անօթութենէ նուազեալ վիճակի մէջ էին: Ամբողջ ատ օրը լերան ամէն կողմը խուզարկութիւն եղաւ. զօրք ու ժողովուրդ փնտաւորել կ'ընէին: Քննեցին, զննեցին ամէն անկիւն, անցան հրոսակներուն եղած տեղէն քիչ մը հեռուանց, առանց զանոնք նշմարելու: Ու երբ օրը իրիկուն եղաւ ամենքն ալ քաշուեցան:

Հրոսակախումբը ա՛լ ապահովուած էր, բայց անօթութիւնը զիրենք սաստկապէս կը տանջէր, ուստի իրենց բռնած զիրքերէն ելլելով գէպի ձորը յառաջացան. զտեղեկէ մը բարձրանալով, քարերու մէջէ պիտի անցնէին

գէմի այդին եւ պիտի կշտանային թուիթով: Խուժարին առ-
ջեւէն կ'երթար ճինկօ սրուն «բարի այժ» կ'ըսէին ըն-
կերները, վասն զի շատ թեթեւընթաց էր ու ճարպիկու-
թեամբ քարերէն վեր կը թռչէր: Ետեւէն կուգար Պէյլէր-
եան որ ուժերէն մէկը թաշկինակը դրած ձեռքն էր բռն-
նած: Երբ գոռարին տեղ մը հասան, ճինկօ անցաւ:
Պէյլէրեան թաշկինակը անոր երկնցուց սպահով տեղ մը
գնելու համար: Ճինկօ մէկ ձեռքովը թաշկինակը բռնած,
միւսովը Պէյլէրեանին ձեռքէն բռնեց անցքը զերացնելու
համար. եւ ահա քարսիպին մէկը քարին զպելով ուժերը
որոտալիւր կը պայթի. ճինկօ բոցերուն մէջ կը տապալի:
Պէյլէրեան վարը կը մնայ ձեռքէն վերաւորուած: Հարուած
մըն ալ մէջքին գալով զաշունին կը հանդիպի, կապը կը
կտրէ կը տանի մինչև վարը միւսներուն բոլ կը ձգէ: Ըն-
կերները կը հասնին, ճինկօն ծանր վիճակի մէջ կը գտնեն.
«մորթած հաւու պէս կը փոփոար». բայց վրան մահացու
վէրք չունէր: Պայթած ուժերին մօտը գտնուելուն անդրա-
վարտիքը այրած էր, ու ազդրին մէջ քանի մը վերքեր կա-
յին: Ռուսը իր ուժը բարեբաղդաբար զիմացի քարերուն
առած էր, որոնք թուած էին, ու հետքերը յայտնի էին:

Ճինկօն վերցնելով մօտակայ գեղի մը մատուռը տա-
րին. հոնկէ լուր խրկեցին մօտերը գտնուող ծանօթ անձի
մը որ աղան հետ գալով վերաւորը գարմանելու հսկը
յանձն առաւ: Խօսելով ան օրուան փնտրտուքներուն վը-
րայ ատ մարդը ըսաւ.

— Այսօր ո՞ր կողմերն էիք. ա՛լ պահաս տեղ չմնաց
փնտրեցինք. ես ու աղաս ալ պարտաւորուեցանք ձեր ե-
տեւէն իյնալու. երկու մամ է որ տուն գալով հանգստա-
ցած կ'ինք. ա՛լ աս կողմերը վախ չի կայ: Այնչափ փնտը-
ռեցին որ ա՛լ չին յուսար որ աս կողմերը կ'ըլլաք: Փայ-
մագամը որ հետեւին էր թէղքէրէ մը առաւ եւ շուտով
եւ պիտի գտնայ. վաղն առտու Ակնայ եւ Տիլրիկի զօր-
քերը կը մեկնին: Երգնկայէն Միւստայի Ռամուսին օշ-
նականը ութսուն զօրքով ճամբայ ինկեր է Արմուտան գա-
լու. տեսնենք վախճանը:

Յետոյ ճինկային բով սպասուար մը գրին որ աղէկ
մը նայի: Հրոսակներուն ալ ուտելիք խմելիք տալին. զե-
զէն ալ մէկը յատկացուցին որպէս զի ամէն օր մանաւոր
տեղ մը ուտելիք խմելիք տանի: Ա՛լ հալածեալները անկէ
եպքը բիշ մը հանգստացան: Ամէն օր ուտելիքնին կու
գար. եւ կը սպասէին որ ճինկօն աղէկնայ: Այս միջոցին
կը մտածէին թէ իրենց միւս ընկերը, Նշան պատուելին
ի՞նչ եղաւ արդեօք: Խեղճին սաքը կ'ստրած Արմուտան
ձգեր էին. ո՞ր մնացած էր, ի՞նչ եղած էր:

* * *

Գիշեր տանն Հասան Օվայի ճամբան աղքատիկ հա-
լուտով մէկը կ'երթար. զգուշ եւ յամբաքայլ կ'ընթանար,
մէյ մը չորս կողմը կը զիտեր եւ ետքէն կը յառաջանար:
Հասաւ կեանքի ամառանոցին մօտերը ուր ոչխարները
կը գիշերեն, եւ ահա շուները կը հաջնէ եւ հովիւները հը-

րացան մը կը պարպեն, գայլ կարծելով: Աղքատը յան-
կարճ ցատքեց քարի մը ետեւ ու քովէն հրացան մը հա-
նելով շակեց. տեսնելով որ ա՛լ հրացան նետող չի կայ
ինքն ալ զէնքը տեղը դրաւ եւ կրկին սկսաւ ճամբան շա-
րունակել: Հասաւ գաշա մը ուր որայի զէզեր կային. այն
գաշտին մէջ առդին անդին թափառեցաւ. կ'երեւի ճամբայ
կը փնտրէր. չգտաւ եւ յուսահատ եկաւ գէղին մէկուն մէջ
մտաւ. երկու վայրկեան սպասեց, նորէն ճամբայ ելաւ, ու
շատ փնտռելէ ետքը ճանապարհը գտաւ: Զառիվայր մըն
էր, անկէ իջաւ գետակի մը ափը ուր ջուրը անցնելով մը-
տաւ Հասան Օվայ: Ատ գեղը քանի մը գտնենք զարկաւ.
ո՛չ մէկը բացուեցաւ. հասաւ ուրիշ գուռ մը որ ուրախու-
թեամբ բացուեցաւ, «օրհնեալ ըլլաք» ըսելով: Տան տէրը
երբ տեսաւ թէ եկողը աղքատ մըն է, ախրեցաւ. «Ա՛խ,
սխալեր ենք ըսաւ, Նշան պատուելին ձայնը կարծեցի:»
— Այո՛, նոյնն է պատասխանեց ծպտեալ աղքատը: Ա՛լ
իրարու գիրկ ինկան. եկուորը բացատրեց իր ծպտուած
ըլլալուն պատճառները, եւ բոլոր եղելութիւնը իրարու
պատմեցին:

Այս միջոցին Արմուտան եւ շրջանակները խուզար-
կութիւնները ոստակացած ըլլալով, Պատուելին գեղը պա-
հել խահմուտներն չհամարուեցաւ. տարին փոքրիկ ձորի
մը մէջ խոտոջ մը գրին, շորս կողմէն գոցելով ու միայն
չունչ աննելու շափ ծակ մը թողով: Յարեկները հոն կ'ան-
ցընէր պատուելին, գիշերները միայն գուրս ելլելով կը
ճաշէր: Տասերկու օր ծակը մնաց. ու ա՛լ երբ կ'առավա-
րական խուզարկութիւնները վերջացան ատ կողմերը, կա-
մաւոր բանտարկեալն ալ գուրս ելաւ, գեղը իր բարեկամ-
ներուն բով եկաւ:

Խեղը միտքը իր ընկերները գտնել էր. անոնք ալ
չէին գիտեր պատուելին ի՞նչ եղած ըլլալը: Ասոր ազգա-
կանները ու բարեկամները ամէն օր ուտելիք աննելով
կ'եկէին անձանները լեռները զինքը փնտռելու, բայց եւ
կը գտնային առանց գտած ըլլալու: Վերջապէս ա՛լ չգի-
մանալով պատուելին Արմուտան մարդ խրկեց եւ ուզեց ի-
մանալ ընկերներուն ո՛ր գտնուիլը: Գեղը մեծ ուրախու-
թիւն տրեց Պատուելին սղջ ըլլալուն լուրին վրայ: Փա-
ցող տղան լուր բերաւ թէ հրոսակները մօտերն են բայց
ո՛ր ըլլալնին յայտնի չէ: Միանգամայն իմացուց զօրքե-
րուն գտնուած տեղուանքը: Այս տեղեկութիւնները ստա-
նալով Պատուելին նորէն ծպտեցաւ ու ճամբայ ինկաւ Ար-
մուտան վերադառնալու: Երկու ընկերով ճամբայ ելաւ.
անոնք մինչեւ գետակը առաջնորդեցին իրեն, եւ հանքած-
նուեցան: Պատուելին ճամբան ստրված էր հիմա, եւ արագ
արագ յառաջացաւ մինչեւ գեղը երեւնալիք տեղը: Երբ
գեղը հրեւաց, անոր մօտ գտնուող խաչի վար ըսուած
տեղը եօթը լոյս կը պլպլար. զօրքին վրաններուն կան-
թեղներն էին որ կը վառէին. ճամբան փոխեց եւ ուրիշ
կողմէ գնաց, մինչեւ հասաւ պարտէզները, ցատքեց պար-
տէզէն, եւ միշտ շուներուն հաջիւնին, մարդոց խօսքերուն
ուշագիր ըլլալով կամաց կամաց յառաջացաւ ու պարտէզի
մը տակ երկաթ պակն կ'անց առաւ. շուները սկսան իր

վրայ ալ դալ. մէկուն անունը տուաւ, միւսները լոնցին. գնաց կեցաւ բարձրկէկ տան մը առջեւ, ու կամաց կամաց գողի պէս կը զարնէր զուտը. վրայի պատշգամէն կին մը երեցաւ եւ վախէն փախաւ. պատուելին կը շարունակէր զուտը զարնել, երկու կին երեցան, համարձակութիւն չունէին վար իջնալ զուտը բանալ. վերջապէս ճանչցան ձայնէն եւ ուրախութեամբ վար վազեցին. Պատուելին զբքանչն ու կինն կին:

Գողի պէս կամաց կամաց կը խօսէին, թէ՛ թշնամիին կասկածէն եւ թէ՛ վախնալով որ պղտիկները կ'արթնան եւ կ'իմանան: Իրարու պտամեցին բոլոր անցած գարձածները: Տնեցիները իմացուցին պատուելին որ զինուորները զիշերը մինչեւ լուս փողոցները կը պտրտէին, եւ թէ երկու երեք օրը անգամ մը կը խուզարկէին Պատուելին եւ Պէյլերեանին տաները: Յաջորդ օրը հաւանորէն փընտառուքի օրն էր, ուստի Պատուելին մեկնեցաւ եւ գնաց մարազի մը մէջ պահուարիլ, պատուիրելով որ Ղարա Միրը իրեն խրկեն: Միւս օրը սրտոս հովիւը գնաց իր բարեկամին մօտ, եւ անոր հաղորդեց թէ հաւանական է որ մարազն ալ փնտառուք ընեն. ուստի նորէն ծպանալ վիճակի մէջ հանկէ ալ Պատուելին փոխ սղորեցնն ուրիշ տեղ:

Ենթահիւ Ղարա Միրին եւ ուրիշ երկու անձի որոնք պահած կին ձինկօն եւ ընկերները, Պատուելին իմացաւ ընկերներուն ուր գտնուիլը: Քիչ ետքը Պէյլերեանէն նամակ կը ստանար. ձինկօն աղէկնալու վրայ էր, իրենց մէկը անոր հետ Տերսիմ պիտի անցնէր, եւ ինքն ալ Եւկէն Պաղտասարի հետ քիչ ատենէն Արմուտան պիտի գար միանալու Պատուելին եւ երեքը մէկտեղ ուրիշ կողմեր երթալու համար:

Ալ զսահութեամբ եւ համբերութեամբ սպասեց:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՂԱ

(ՊԵՊ)

Է

Մարտիկ աղային ունկնդիրներուն մէջ էր, միակ տարիբոս մարդը ըլլալով, Պողոսեցի վաճառական մը, իր հարստութեան թափթփուքներովը ապրող: Աս մարդը զրամական կարեւոր պահանջներ ունէր օտմանեան կառավարութենէն: Մարտիկ աղային հետ ծանօթացած ու այդ մասին խօսած էր ողբագին: Այս վերջինը ապահովցուցած էր զինքը:

— Դուն հոգ մ'ըներ, ըսած էր, Ռուսը քանի մը տա-

րիէն տաճիկին խերը պիտի անիծէ, Թիւրքիան պիտի զըրաւէ, դուն ալ քու ստակներդ ամբողջովին կրնաս զանձել:

Երկար պերճախօս բացատրութիւններով Մարտիկ աղա համոզած էր վաճառականը, որ այդ յայտով, այդ հաւատքով կ'երթար:

— Ի՞նչ ընելու միտք ունիս, Սարգիս Էֆէնտի:

— Կը սպասեմ կոր որ Ռուսը Տաճկաստանը անկորպէս զի ես ալ իմ աննշխններս զանձեմ:

Չորրորդ արիւնը ցամաքած մէկը՝ Սարգիս Էֆէնտին, ցիցի պէս երկայն ու նիհար մարմինով, որուն վրայ զըրուած մինիւրիկ գլուխ մը, ճղճիմ բիթով, ներս փախած ծնօտով: Յիսունը անցած, հանգարա, բժականդիր, կամօցուկ մէկը, տասիկ տասիկ քարոզ ու խօսող, որ յուսահատ ճիգեր կ'ընէր հետեւելու համար Մարտիկ աղային խօսքերուն ու կրակոտ աշխոյժ յորձանքին, ճակատը կը կնճուտէր, ակնաջները կը անկէր՝ չհասկցողի զժողհ երեւոյթով, քիչ կը խօսէր ու կամաց կամաց, քայլ առ քայլ, աջ ձեռքին մէջ համրիչ մը սրուն հատիկներուն անջատումին զանդաղիտութեամբ խօսքերը, մէկիկ մէկիկ, կ'իջնային իր ժողատ բերնէն:

— Բէք աղէկ «ամմա», առարկել կ'ուզէր երբեմն. բայց իր խօսքը այնքան կը քաշքշուէր, կը զանպաղէր որ զեռ շաւարած՝ Մարտիկ աղա անհամբեր իր կայտառ ձայնին հզօր հնչումներովը կը խափանէր ծերունիին ջղային ու ծոյլ բղղունը: Երեւակայեցէք քար մը որ յաւակներ հեղեղի ժը հոսուը կեցնել:

— Դուն ինձի մտիկ ըրէ՛, ա՛ պապամ, ինչու պէտք, կ'ըսէր Մարտիկ աղա, որ ուրիշներէն խօսիլ չէր պահանջեր, չէր խնդրեր, շատ հարուստ, շատ ըլլալով այդ մասին:

Իր մտացութիւնը, խլուրթիւնը Մարտիկ աղային խօսքերուն ուշադրութեան՝ խոժոռ հրակերներու առիթ կուտար աս վերջինին կողմէն՝ որ ատ մասին շատ հոգ կը տանէր. իր խօսքերը «մտիկ կ'ընէ՞ք կոր, մտիկ ըրէք» ներով կը վխտային:

— Մտիկ կ'ընե՞ս կոր, միւսիւ, մտիկ ըրէ:

Պէտք էր «այս» ըսել, բարձրաձայն եթէ ոչ կը կըրկներ իր հարցումը ու հրամանը:

Կար նաև 19-20 տարեկան երիտասարդ մը, տըմգայն, նիհար, սմբած, սատկած երեւոյթով: Երկայն սուր բիթ մը ունէր, ոչոր մուտր բուննող նորածիլ պիտեր, մորուքի կասկած մը թուշին ծայրը մրտաող, թաւ ազեղ յօնքեր մարած մարմրած աչքերուն վրայ: Մինակ կամ ընկերներու հետ, երկինք նայելով կամ ձեռքը ունեցած մէկ զրքին վրայ, ատ տղան իր մտախոհ սիլուէթը կը պտտցընէր ամբոխին մէջէն, ակնարկը տարտամ, քայուածքը փրփրող, անցօղուն: Հակառակ աս բաներուն, կրցեր էր, շնորհիւ պաշտպաններու, ազուր պաշտօն մը ձեռք ձգել պետական պաշտօնատան մը մէջ, ի մեծ ապշութիւն շատերու որոնց համար իր «սերսեւեւաշիւնը» վաւերական էր: Անունն էր Գուրջեան, շատ լաւ պատկերացընող իր անձը ու նկարագիրը: Իր պարապուրդի ժամերուն, Մարտիկ աղային կուգար երբեմն անկնդրել:

Մարտիկ աղա օր մը այդ երիտասարդը որուն հայ ըլլալը գիտէր սրճարանին մէջ տեսած էր զբազան Ֆիկսոսի մէկ զբական յօլուածը կարգալու:

— Ատանկ բաներ մի կարգար, միտի... ատոնք պարագ բաներ են... ըսելով Դրօշակ մը տուած էր.

— Դրօշակ կարգա, Դրօշակ...

Ու ամէն անգամ որ զայն տեսնար Լուսինն անցնիլը, կը կանչէր ու գրեթէ բռնի բոլը կը նստեցնէր:

— Հէ՞, ի՞նչ ըսիր, Կարապետ...

— Իրաւունք ունիս, էֆէնտի. իրաւունք ունիս, ճիշդ է ըսածդ:

Կարապետը հերոս մըն է: Ինք միայն գիտէ թէ ինչ՞ա՞ հերոս կ'անուանէ ինքզինքը: Հարցնել չըլլար իրեն. իր կողմէն ինքնատու անգեկութիւն, բնա՛ւ: Հերոս է, ասիկա կը բաւէ. ինք ըսած է ատ, ուրիշները կը կրկնեն, ամէն մարդ Աղբքսանդրոյ մէջ գիտէ թէ հերոս է: Ընդունուած, մճուած բան մըն է ասիկա. կ'ուզես նէ տարակուսէ՛, ծաղրէ, անգեկութիւններ հարցո՛ւր, իր շահատակութիւններուն պատուութիւնը: Վա՛յ քեզի: Գիշ մը սանկ ծուռ նայեցա՛ր. հեղնութեան խնամի, տարակոյսի ազգական խօսք մը յանդգնեցա՛ր, իր խօսքերուն հերքում մը, ընդդիմաբանութիւն մը փախուցի՛ր բերնէդ, ոչ-յարգական շեշտ մը, զիրք մը հազա՛ր իր նկատմամբ, խե՛րդ է անիծուեր:

Կարապետին խոշոր, երկու քովէն ուռած բիրտ գէմքը կը կարծրի բարկութենէն. նայիս կատարած մատերով պետիբը կ'սրբէ սպառնալից, աչքերը կը թաւալէ խո՛տո, գաւազանը ձեռքին մէջ կ'երեւցնէ ու ահապին բերանը կը բանայ:

— Ե՛օ՛, ես քուկին խերդ կ'անիծեմ... հա՛, շունչանորդի... գիտե՛ս ես ո՛վ եմ... ինձի պէս հերոսին...

Սպանալիքի, զայրոյթի գոեհիկ խօսքերու, հայհոյութիւններու ազտոտ հեղեղ մըն է կը թափի բերնէն:

Կրնաս նէ պատասխան տուր, գաւազանի հարուածի մը կամ կոուսի մը անախորժ անակնկալը աչքդ աննելով: Աղբքսանդրոյ մէջ տեսակ մը տերեւկոյի կարած է այդ մարդը: Հերոսութիւնը իրեն անցագիր, միայական, արհեստ ըրած, բիրտ ուժը իրեն զրահ, ուրիշներուն վախկոտութիւնը իրեն քաջութիւն, ջրհանկիրի կամ ծովահէններու նաւագետի սպանալից, կոշտ, ինքնիշխան ձեւերով, աշխարհակալութեան Եօսովանի պէս հատհատ ու բռնապետ, կը պատի Հայերուն մէջ, կոուսի, կիցի, գաւազանի հարուածներ իջեցնելով աջ ու ձախ, հայհոյութիւններու, նախ ասիւններու, սպանալիքներու տարափ մը տարազնելով ճամբուն վրայ, ու, տեսակ մը ինքնակոշ պատախազ՝ իրեն չլիբաբերող խնդիրներուն խառնուելով, մէճերու, կոիւններու միջամտելով, հաշտեցնելու տեղ ինք ալ կուսի բռնուելով, լուսութիւն, իր կամքին, խօսքին անպայման հպատակութիւն պահանջելով, հարուստներու ներկայանալով ու իբր հերոս, զրամ պահանջելով, փրցը-

նելով բռնի, սպանալիքներու, անարգանքներու հեղեղի մը մէջ:

Հերոս է. ըսելիք չկայ. ո՛վ կրնայ գիմարել իրեն: Ազգին փրկութեանը համար իր կեանքը մահուան նշանած է: Ճամբայ տուէք որ անցնի, լոնցէք որ խօսի, քսակնից բացէ՛ք որ առնէ մէջէն. Հերո՛ս է:

Աս հերոսը սակայն, այնքան զուրապրիտ ուրիշներուն հետ, Մարտիկ աղային տեսակ մը յարգանք... հրուսակնածանք կը ցուցնէ: Կ'ըսեն թէ զինքը սնուցանողը ան է: Էն կատաղի շուններն ալ չեն լզեր միթէ:

Ուրիշ գաշնակցականներ ալ կային: Յոյն կառուծի մագերուն պէս սանտրուած գլուխով, ծնօտին երկու քովերէն եղջիւրներու կամ էշու ականջներու պէս մեկնող կիսամորուսներով, խզլիկ մը: Գաւառացի աղայ մը, կարճըլիկ, անշուք, խլէզ, Ռուսահայ մը, նիհար, երկայնահասակ, որ կը ջանար իր ընկերական զազափարները հարցնել Մարտիկ աղային, յուսալով թերեւս անոր հարուստութիւնէն մաս մը փրցնել, իբր հետեւանք իր քսրոզած հաւասարակշռութեան:

— Էլիզէ Ռըքլիս ասում է իր համբաւուր մէկ բրօշիւրին մէջ որ մարդիկ այն մասնակ միայն կարողանում են ամբողջական կուլտուրայի եւ հետեւաբար երջանկութեան հասնել, երբոր քեկտեկցիա ունենան...

Աս գիտական բացատրութիւններէն անշուշտ բան մը չէր մտնէր Մարտիկ աղային ուղեղին մէջ, որ պատկերներու միայն զգայուն էր: Միւրը, երբ յուսահատած իր ընկերվարական «տէօրիա»ները վերացական տարազներու գատարկութեամբը հասկցնելու Մարտիկ աղային, «կապիտալիսթ»ին, խօսիլ ուղեր Պետրոսի Պօղոսի լեզուով — որոնք համար արդէն շինուած է ընկերվարականութիւնը — Մարտիկ աղա կը բողոքէր:

— Աս ի՞նչ ըսել է... ինչ՞ա՞ իմ հարստութիւնս ուրիշներու բամբուսի... ի՞նչ ըսել է... թող ամէն մարդ աշխատի հարստանայ... ես ի՞նչպէս եմ հարստացեր իմ ջանքերով... աս է նէ ընկերվարականութիւնը պարագ բան է եղեր...

— Բայց Դոշնակցական պետերը ամբողջ Մարտի, Լասալի ընկերվարական վարդապետութիւններին գուանում են... Կոքա ընդունում են որ...

— Չէ՛, ճանըմ, դուն սխալ կ'ըսես կոր... անոնք անանկ բաներ չեն ըսեր, կ'ըսէր Մարտիկ աղա, քիչ մը Կոյելած. եթէ ազատութիւն ստացուելէն ետքը՝ հարստութիւնը գրաւելով ուրիշներուն բաշխէ՛ն նէ, հարստաբաղու:

Մարտիկ աղային սովորական ունկնդիրներէն մէկն ալ խմբագրապետ մըն էր Աղբքսանդրոյ մէջ երկու երեք ամէն ի վեր, մանիշակազոյն մեղանով, ձեռքի գրով աբպուող «Հայ Աշխարհ» լրագրին: Գաղթականներու լրագիր, պահ, մինչեւ 50-60 օրինակ ծախուող: Բայց Պ. Միհրան Դարբինեանը — Պսլիս Չիլիկիւրեան — ոչ թէ զրամ վաստկելու, այլ ազգին ծառայութիւն մը մատուցանելու համար է որ այդ հրատարակութեան բազմութիւն — ամենքն ալ ինք, տնօրէն, խմբագիր, գրաշար, տպագրիչ, ցրուիչ —

Հոգերը ստանձնած է: Ըստղներ կան թէ ասիկա երեւցած է իրեն զրական միջոցը գաղիերէն սորվելու, Ալեքսանդրիոյ տեղական գաղիերէն թերթերը թարգմանելով իրենին մէջ: Թարգմանութեան բազմաթիւ անհեթեթ սխալները սրոնք իր յօդուածները կը լեցնեն, եւ միայն Հայերէն վիտայոյններուն համար՝ կ'առեգծուածեն իր նախադասութիւններուն իմաստը, կարծես կը հաստատեն այդ ենթադրութիւնը: Կը գանդատի խմբագրապետը թէ ինչո՞ւ հասարակութիւնը բարեկամ ու քաջալերող ընդունելութիւն մը չընեն իր այդ ազգօգուտ ձեռնարկին: Իրաւունք սննի, մեր ազգը գնահատել չի գիտեր իր զրազէտները, հրապարակագիրները:

— Եթէ քաջալերուէի թէ՛ բարոյապէս թէ՛ նիւթապէս, կրնայի այն ատեն թերթ մը հրատարակել, « իրաւցնէ » թերթ մը. բայց ի՞նչ ընեմ, մեր ազգը ապերախ է:

— Եզրայր, դուն ի՞նչ կ'ըսես կոր... ես ազգին ԱՅ տարի ծառայութիւն եմ մատուցեր, ազգային մանկտիւն եմ գտտիարակեր աէ՛, այսօրուան օրս ապրելու համար նպարտաճանութիւն կ'ընեմ կոր... եթէ ազգը երախտազէտ ըլլար նէ, ինծի հիմակ Ալեքսանդրիոյ վարժարանին անօրէն կ'ընէր, անօրէն: Ընտրուած գտտատունները քանի՞ կ'անոնեմ... մէկը զրաբարէ ուրիշ բան չի գիտեր, միւսը շիտակէ շիտակ գաղիերէն չի հասկնար: Ես հայերէն, տաճիկերէն, գաղիերէն, անգղիերէն ջուրի պէս գիտեմ... յունարէն կը խօսիմ... գերմաներէն կը գրեմ, ռուսերէն պիտի սորվիմ, արաբերէն ալ սորվելու վրայ եմ... անոնք ի՞նչ գիտեն... թող ելլան հետս մրցին նայիմ... սրի՛ կ'ըսես... Ազգին ապերախտութիւնը դուն ինծի՛ հարցուր... ինծի՛...:

— Գարա՛կեօզեան, հոս մտիկ բրէ՛, կը հնչէ անդիէն խոժոռ ձայնը Մարտիկ աղային:

Մարտիկ աղա քանի մը օրի չափ իր ունկնդիրներուն մէջ ունեցաւ պոլսեցի բժիշկ մը, կայտառ, զուարթ, շատ խօս մէկը, ինքնահաւան մեծխօսիկ պարզամտութեամբ, իր բուռն ձեւերով ու վառ խօսուածքով քիչ մը Մարտիկ աղային նմանող, առանց ունենալու այս վերջինին խոժոռ ու հպարտ կերպարանքը: Շատ զուարթ, կարող իր սլըշկան զուարթութեամբ շփշփելու, տաքցնելու, ցնցելու Լէոբարտեան էն խորունկ արտուութեամբ ուռած թմբած մարդը: Անգիմադրելի էր զուարթութեան հոսանքը որ կը յորդկեր, իբր մշտաբնօղի ճոխ աղբիւրէ մը՝ իր բարեմիտ, ծիծաղներով ընդլայնուած, բաց գէմքէն, իր շեշտէն, խօսքերէն, ձեւերէն: Աս ալ քաղաքականութեան մենամուտ, Մարտիկ աղային չափ մեկնաբանող ու գուշակող: Դժբաղդաբար անոր չափ ալ շատ խօսող: Մարտիկ աղան ալ, գիտենք արդէն, մտիկ ընող մարդեր միայն կ'ուզէր: Աս բրժիշկը իրմէ աւելի կը խօսէր սակայն, միշտ կ'ընդմիջէր զիւրքը, կ'առարկէր, կը հերքէր, կը ջանար ընդհանուր ուշադրութիւնը իր խօսքերուն լծել: Չեղաւ... — երկու անպարար միեւնոյն պարանին վրայ չեն կրնար խաղալ, ինչպէս երկու որսորդ միեւնոյն թռչունը զարնել, — քանի

մը օրէն վերջ՝ բժիշկը ա՛լ մէջտեղ չելաւ ու կրկէսը ազատ մնաց Մարտիկ աղային որ ատանկ տիպարներու մէջտեղ առտուրնէ մինչեւ իրիկուն իր ժամանակը կ'անցընէր, անհոգ ու երջանիկ, ալ վերջնականապէս իր ասպարեզին մէջ թեւակոխած:

Օրերը կը սահէին ու մուրճի հարուածներու պէս Մարտիկ աղան ալ աւելի կը միւկէն, կ'ամբոսցնէին իր նոր հաւատքին մէջ: Ուրիշները համոզելով ինքզինքը կը համոզէր հետզհետէ, իր պերճախօսութենէն տարուած, իր երեւակայոտ նորադարձի եռանդին մէջ՝ բերնէն խուսափող չափազանցութիւններուն ինքն ալ հաւատալով տակաւ, կրկնութեան ուժով, ու յանդելով այսպէս կայր ու մօլեռանց հաւատքի մը Դաշնակցական կուսակցութեան՝ ու ասոր միջոցաւ՝ Ազգին մօտալուտ փրկութեանը մէջ: Սուրենանին, մերթ ընդ մերթ, իրեն ըսած խորհրդաւոր, ծածկամիտ խօսքերուն կէտ-լուութիւններէն, վերապահումեն, ընէ հրաշալի ենթագրութիւններ կը հանէր, մողական յայտներ, անկասկած ապահովութիւններ զոր կը ջանար իր տաք խօսքին հազարականութեամբ փոխանցել իր սնկընդիրներուն:

Հաւատքը ունէր հիմա, անխախտ, թէ Դրօշակեաններուն շնորհիւ Հայ ազգը ազատութեան պիտի տիրանայ, մօտ ժամանակի մը մէջ: Այդ հաւատքը զինքը ճառագայթումի, արտապոսթիւմի, տենդոտ, խանդավառ վիճակի մը մէջ կը գնէր, ըլլալով միանգամայն շրջած ակնկալութիւնը այն ազատութեան վաղորդային իրեն վերապահուած պատիւներուն, փառքին՝ որ զինքը պիտի թագադրէր կեանքին մէջ ու անմահացնէր պատմութեան առջեւ:

Մարտիկ աղա իր քսակը լայն բացած էր կօմիտէին, ինքն իսկ առաջարկած, ինչպէս էր իրեն պիմում ընել զրամական պէտքի, նեղութեան մը պարսօգային: Իր հըրաւերը շատ սիրով ընդունուած էր:

— Դուք առաջին, միակ Հայն էք որ այսքան վեհանձնարար, ինքնաբերաբար ձեր քսակը կը նուիրէք Ազգային վերականգնումի սրբազան դրօթին, կ'ըսէր իրեն Սուրենան: Ազատութեան գործին մէջ, ձեր բախիւր ձեր դերը մեծ պիտի ըլլայ, մեծ, Մարտիկ կփէնտի: Արդէն ձեր անունը զրուած է ուր որ անկ է... վերջէն կը տեսնաք:

Ու Մարտիկ աղա կը վճարէր, առանց հաշուելու ինչպիսիւ: Սուրենան իրեն ընդհնարակ տուած չէ՛ր, շատ մօտաւոր ապագայի մը մէջ, Հայկական խնդրին յաջող լուծումը. ապահովացուցած չէ՛ր զինքը թէ յեղափոխութեան շրջանին մէջ եղած բոլոր կամաւոր նուիրատուութիւնները, ազատութենէն վերջ՝ նորակազմ « Ազգային զրամատան » կողմէն ամբողջովին պիտի վերադարձուին, իրենց տոկոսներովը:

Որքան որ միամիտ՝ Մարտիկ աղա առարկած էր. ի՞նչ, տուած զրամները պիտի հաստուցուին իրեն, տոկոսներով:

— Անշուշտ, բացատրած էր Սուրենան. Հապա, ի՞նչ.

պէս կ'ուզէր որ ըլլայ... Ենթադրեցէք որ բոլոր հարստու-
թիւննիկ վատնէք այս գործին համար: Արդ, արգարացի է
որ ազգը ձեր զրամական նպաստներէն օգտուելով իր ա-
զատութիւնը ստանալէն վերջ՝ «զձեզ» աղքատ ձգէ: Պար-
տական չէ՞ հարստացնելու «ձեզ» ինչ որ զուր ինքնարե-
րաբար, ազնուաբար, հայրենասիրաբար, նուիրեցիք իրեն
իր պէտքի օրերուն:

— Անանկ է ես'...

Այ հոգը չէր: Իրամը իսկ պիտի տրուէր իրեն, պա-
տիւններէն, փառքէն զատ: Աւելի ուրիշ ինչ կ'ուզէր:

Իր այս նոր զիրքը սակայն քանի մը անտիրոջ անա-
կրնկալներ, ձախողութիւններ հրամցուց Մարտիկ աղային:

Ատուտ մը, պատուհանին առաջը, զէմքի զոհունակ,
ծիծաղիտ արտայայտութիւնով մը կը խորհէր թէ «ան-
պատճառ» Ատուտոյ մատը կար «Մարտիկ» կոչուելուն
մէջ. ինքն իր վրայ խնդարով, միտքը կը բերէր թէ Պոլիս,
անխելքութեամբ, որքա՛ն թշնամի էր այդ անունին, որ իր
աչքին՝ սանկ մէկու մը պատկերը կ'արթնցնէր: Արդարեւ
Պոլսեցի Մարտիկ աղային անմիթարելի ցան էր իր
«Մարտիկ» անունը: Իրեն պէս մեկուն կը վայլէ՛ր, ար-
ժանի էր այդ անունը որ, իր կարծիքով, գաւառացիներու,
անշնորհք, խեղճուկ մարդերու միայն յատուկ էր: Պոլիս,
զուշագած էր «Մարտիկ» կոչուող սպասաւոր ունենալէ.
Իր իսկ անունով կանչել իր հրամանին տակ զանուղ մէ-
կը. ինչ նուաստացում իր արժանապատուութեանը հա-
մար: Ամէն իրեն զիմող սպասաւորի, նախ եւ առջ անու-
նը կը հարցնէր. Մարտիկները, Մարտիրոսները, առանց
ուրիշ ո՛ր եւ է ձեւակերպութեան կը ճամբուէին:

Փորձած էր «Մարտիրոսի» փոխել «Մարտիկ»ը, ան
ալ միեւնոյն բանը:

— Ծօ՛ Մարտիրոս, ծօ՛ Մարտիկ... որ կողմը որ
գարձնէր իր անունը, ինչ ձեւի որ ալ խօթէր, Մարտիկ
աղա սպասաւորի, զրոհեցի, սանկ մարդու մը հոս կ'առ-
նէր մէջէն: Այս առիթով, յաճախ կոխներ կ'ունենար իր
մօրը հետ:

— Ճանրմ, աս Մարտիրոսը ո՛րիկէ դացիք դառա...
միւս բոլոր անունները հատեր տէ՛ մինակ ա՛տ մնացեր
էր... Վահրամ, Վահան, Վաղարշ, Տիգրան... ու կը
թուէր բոլոր պերճ, սոնքացող անունները:

Խնդարով կը յիշէր բոլոր ասոնք ու կը խորհէր թէ որ-
քան տղայ է եղեր. իր նախասահմանուած անունին խոր-
հրդաւոր նշանակութիւնը կը ցայտէր իր աչքին՝ հիմակ որ
յեղափոխութեան յարած էր, Դաշնակցութեան մարտանդը
զարձած էր:

— Մարտիկ, կ'ըսէր ուրախութեամբ, Մարտիկ, կը
նշանակէ պատերազմող, կռուող... ճիշդ իմ անուն...
ես ալ չէ՞ մի որ կռուող եմ, յեղափոխական եմ... Ինչ
աղօր անուն, Մարտիկ... Ատուտոյ մատը կայ առոր
մէջ:

Աս բանը ա՛լ վերջնականապէս գամեց զինքը իր հա-
ատքին մէջ:

Ոսանկ ժպտուն խորհրդածութիւններու մէջ էր, երբ
իր հայ սպասաւորը — յեղափոխական ըլլալէն ի վեր ա-
րաբը ճամբած ու անոր տեղ Դաշնակցական մը առած էր —
եկաւ իրեն իմացնել թէ վրան զուլը թափթփած, խեղ-
ճուկ մէկը կ'ուզէր զինքը տեսնալ:

— Ո՞վ է ան, ի՞նչ կ'ուզէ կոր... Թող ներս գայ նա-
յիմ, հրամայեց ամբաստանուած մը դատելու պատարաս-
տուող մէկուն զիրքը ու զէմքը աննելով:

Գաւառացի տարազով ու զէմքով մէկը ներս մտաւ:

— Ինչ կ'ուզեք աղբար...

— Էֆէնտի, ըսաւ մարդը, աղաչական... ու սիսու
պատմել իր թշուառութիւնը — Պոլսոյ վիճակը, բաւական
գոհացուցիչ, ունեցած ահագին փնտնեքը, հաստեղի յու-
սահատ կացութիւնը: Կուգար աղաչել էֆէնտին որ քիչ
մը օգնէ իրեն: Իմացած էր որ էֆէնտին բարեսիրտ ու
բարկործ մէկն է, Ազգին շատ բարեքներ ըրած է:

Մարտիկ աղա հնդկահաւի պէս կ'ունենար, ու իրա-
րու ետեւէ կը ծխէր, արագ արագ:

Կուգար աղաչել որ հաճի օգնել իրեն, ձեռք կարկա-
նել, «Ատուտոյ սիրուն, աղւորիկ աղջկանը սիրուն», իր
եւ իր թշուառ ընտանիքին:

— Հը՛, ըրաւ Մարտիկ աղա, դուն յեղափոխական ես:

Մարդը — իրօք յեղափոխական, նոյն իսկ Դաշնակ-
ցական ատենօք — որ առիթ ունեցած էր, եկեղեցին կամ
այլուր, Մարտիկ աղան տեսնալու իր նախորդ հաւատքին
զանազան արտայայտութիւններուն մէջ, աս հարցումին՝
բողոքի բուն շարժում մը ուրուագծեց:

— Ինչ կ'ըսես, էֆէնտի, ե՛ս յեղափոխական ըլլամ,
քա՛ւ լիցի... ան խայտառակները...

— Որո՞նց համար կ'ըսես կոր, ընդմիջեց Մարտիկ
աղա, Հնչակեաններո՞ւն թէ Դրօշակեաններուն:

— Հնչակեան Դրօշակեան ամենքն ալ զեանին տակը
անցնին... մանաւանդ Դրօշակեանները որ...

Հազիւ այս ձախող խօսքը բերնէն փախած էր որ լսեց
մէկէն, ապշած ու ահաբեկ՝ Մարտիկ աղային առջեւ որ
բազմոցին վրայ կէս մը սաքի ելած՝ սպաննազին ու խո-
ժո՛ւ հրամայող շարժումով մը դուր կը ցուցնէր իրեն:

— Լո՛ւ, դուրս ելիր աստեղէն, կորուէ՛ անպիտան...
դուն ո՞վ Դրօշակեանները նախատող ո՞վ...

Մարդը շուտաւ յանկարծակիի եկած, լուսնէն ին-
կած երեւոյթը ունէր մէկու մը, որ շուր խմել հաւատարմ
ալքովին այրող կրակը կը կլլէ, կամ, աթոռին վրայ նըս-
տելու ապահովութեամբ տախտակամածին անակնկալին
կը բաղխի:

— Ես Դրօշակեաններուն զէմ՝ խօսողին բան մըն ալ
չունիմ տալիք... հայտէ կորսուէ՛ սաւկէ... անպիտան...

— Էֆէնտի, կը թոթովէր դաւառացին... ես ալ Դրօ-
շակեան եմ բայց...

— Վայ, հիմակ ալ սո՛ւտ կը խօսիս կոր... դո՛ւրս
անմիջապէս... ծօ՛ Գիրգոր... սաւիկա դուրս հանէ...

(Մնացեալը յաջորդով) ՊԱՐՈՅՐ

ՕՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՆԱՆՈՒԹԻՒՆԸ

Մակեդոնական խնդիրը կը շարունակէ լրացիրներուն մէջ ծածմուիլ, առանց տակաւին ստանալու այն սպառնալից հանգամանքը որ ամիսներէ ի վեր կը զուշակուի:

Նովոսթի շատ կարեւորութիւն կ'ընծայէ այն իրողութեանը թէ Ֆրանսական կառավարութիւնը վերջերս զեկուցում մը բերել է պուլիար կառավարութեան՝ մակեդոնական շարժման մասին, եւ թէ Սոփիայի նոր նախարարութիւնը, ի պատասխանի, բացորոշապէս յայտնել է թէ թող պիտի չտայ որ Պուլկարիոյ հողին վրայ ո եւ է փորձ ըլլաի՝ Մակեդոնիոյ մէջ խռովութիւն յարուցանելու համար:

Պուլկարիա նմանօրինակ հաւատարեցներ տուեր է նաև Ռուսիոյ, եւ Նովոսթի կ'ըսէ թէ այս խոստումը մեծ կարեւորութիւն ունի, մանաւանդ որ Պուլկարիոյ արդի նախարարութիւնը կրթնած է Սլավոպուլֆի կուսակցութեան, որ միշտ հակամէտ եղած է մակեդոնական գործերուն միջամտելու: Տարակոյս չկայ որ Պուլկարիոյ բռնած այս դիրքին պատճառաւ է որ առաջադրեալ Մակեդոնական համաձուլը չզուստացուցար:

Հարկ չկայ, կը յարէ ուսական լրացիրը, պաշտանեան զանազան պետութիւններուն մէջ զանազան մակեդոնական յանձնաժողովները լուծելու. բայց ըստ որում Ռուսիա, Աւստրիա եւ Ֆրանսոս համաձայնած են մակեդոնական շարժման ոյժ չտալու, լաւ կ'ըլլայ որ Սերպիա, Բուլնաստան եւ Ռումանիա Պուլկարիոյ օրինակին հետեւին եւ ձեռնպահ մնան Մակեդոնիոյ մէջ խռովութիւններ սարքելէ: Գերմանիա, Իտալիա եւ Անգլիա շատ քիչ կը շահագրգռուին այդ խնդրով:

Կը մնայ սակայն թիւրքիան, որ փոխանակ քննիչ յանձնաժողով մը զրկելու՝ ժողովրդին արտունջները մակընելու համար, Մակեդոնիան զօրքերով լեցուցած է. եւ որովհետեւ թիւրք կառավարութեան սովորութիւնն է զօրքը ժողովրդին երեսէն ապրեցնել, կարելի է որ զօրքերուն եւ Մակեդոնացիներուն միջեւ զժողովրդներն առաջ գան:

Մակեդոնիան, կ'եզրակացնէ Նովոսթի, անշուշտ բարենորոգումներու կը կարօտի: Դուրս այդ բարենորոգումները շնորհելու է ի յարգանս պետութեանց բաղձանքներուն, եւ ան ատեն ամբողջ խնդիրը խաղաղօրէն կրնայ կարգադրուիլ:

Հարկ է ըսել որ Նովոսթի ամենէն առաջ ինքն է չհատացող որ թիւրքիոյ մէջ բարենորոգում մը կարելի է առանց մեծ տակնուվրայութիւններու: Բայց Ռուսիա դրծելու ծամը հասած չի նկատեր կոր այժմ, ու Մակեդոնացիները նորէն սուլթանին բարի կամքին կը թողու ահա:

1. 2.

ԼՈՒՐԵՐ

Կ. Պոլսոյ սոսակական դեսպանը վերստին դիմել է Իրան ստիպելով որ հարկ եղած միջոցները ձեռք առնել քննարկելու համար Կովկասի հայ գաղթականները որոնց թիւը 40,000 կը հաշուի:

—Այլ եւս քննադատական շարքեր չեն որ կուզան Հայաստանէն: Այլ օրական հացի պատուան իսկ սկսած է պակսիլ: Սովր սկսած է վակի նահանգին, մանաւանդ հիւսիսային գիւղերուն մէջ:

—Կ. Պոլսէն Բիւզըք մարտ 4 բռնակառնով կը հեռագրէր թէ Ռուսական դեսպանը Իրան ոչնչորոշութիւնը նրաւարէր է այն իրողութեան վրայ թէ Ռուսիոյ ասեմակից օստանեան նահանգներուն մէջ քննադատ Հայերը կարողի կրօնը կ'ընդունին, եւ յայտնել է թէ հարկ է վերջ մը դնել կարողի քրոսականության:

—Անգլիոյ խորհրդարանը այս օրերս գրապեցաւ հայ որբերուն խնդրովը:

Պ. Սիլվեկերը հարցոց արտաքին գործերու խորհրդակալին թէ կարո՞ղ է տեղեկութիւն մը տալ ի մասին այն հրահանգներուն զորոնք կ'ըսուի թէ Իոնուր տաւեր է մեկ քանի կոչակալներու՝ գոցելու համար որբանոցներ որոնք հիմնուած են եւ կը պահուին մասաւր կամ ամբողջովի սեղիակալ կամ ամերիկեան նշաններով, և որոնք զուտ մարդասիրական նպատակներով հաստատուած են յօգուտ հայ ժողովրդին:

Պ. Պրոտիք, ի պատասխանի, ըսաւ. —Կ. Պոլսոյ սեղիակալական դեսպանը կը տեղեկագրէր թէ Բալուչի և Չեքուչի որբանոցները փակուած են, եւ թէ Տիարպիքի մեկ որբանոցին տղաքն ալ անհետներու յանձնուած են, որոնց տակը մէջ կը պահուին միսիոնարներու գրամով: Չեւ կրկար ըսել թէ Չեքուչի որբանոցը դեռ բաց է: Յայտնի է թէ ո'ր կոչակալներուն հրահանգը դրկուած է այս մասին: Դեսպանը սաստիկ դիտողութեան վրայ ըրած է թիւրք կառավարութեան՝ զիրենք տարնանոցելու համար այս մասին, և իրենց ցոյց տուած է քննադատութիւնը և զիչ սպիւնցորդները որ յառաջ պիտի բերի այդպիսի քանակ եւ անարդարանալի արարք մը:

—Միւս կողմէ, մարտ 10 բռնակառնով Կ. Պոլսէն կը հեռագրէն «Թան»ի թէ «Սոչրանը, ոչնչով ստաչքր ատնել հայկական նահանգներուն մէջ Անգլիացիներուն եւ Ամերիկացիներուն հաստատած որբանոցներուն ծաւալմանը, հրահանգել է թիւրք որբանոցներ (.) հիմնել ամբողջ Փոքր-Ասիոյ մէջ:»

—ԱՆԱՀԻՏԻ մարտի թիւը այս անգամ տմտան վերջը միայն պիտի կրկայ յոյս տեսնել՝ տպարանական փոփոխութեան պատճառաւ:

ՀԱՍՑԻ ՈՒ ԲԱՍՆԵԳԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեցին զրկել առ

L. FRANK,
309, LADBROKE GROVE,
(ENGLAND). LONDON, W.